№ 31 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 11 ՓԵՏՐՎԱՐԻ

1910

ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 11 ՓԵՏՐՎԱՐԻ № 31

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Տպարանի տելեֆօն № 228

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

ՓԵՏՐՎԱՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 10 ՌՈՒԲԼԻ

12 ամսվ.՝ 10 ր., 6 և 7 ամսվ. 6 ր., ամսակ. 1 ր. Ամերիկա՝ տարեկան 6 դոլլար, Եւրոպա՝ 32 ֆր., Պարսկաստան՝ 10 ր., Թիւրքիա՝ 120 ղրուշ։ Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն, նոյնպէս և 40 կոպ. (կարելի է և նամականիշով)։

Հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». TIFLIS, Rédaction «MSCHAK».

Յայտարարութիւնների համար վճարում են. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին 20 կոպ., վերջին երեսի վրա՝ 10 կոպ.։ Կովկասից դուրս յայտարարութիւնները ընդունվում են բացառապէս Торг. Домъ „Л. и Э. Метцль и Ко" ֆիրմայի միջոցով Մոսկվայում, Պետերբուրգում և Վարշավայում։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Ի տեղեկութիւն ծխողների!

«ԵՂԲ. ՄԻՅԼԱՆԵԱՆՆԵՐ» Առևտրական Տան ծխախոտի նոր գործարանը բաց է թողել հետևեալ բարձր տեսակի պապիրոսներ.

ПРИМА
25 հատը 30 կոպ.
25 հատը 25 կ. և 10 հատը 10 կոպ.
25 հատը 15 կ. և 10 հատը 6 կոպ.

Зефиръ եւ Деликатныя — 25 ՀԱՏԸ 15 ԿՈՊ. և 10 ՀԱՏԸ 6 ԿՈՊ.
Восходъ և Реформа—10 հատը 5 կոպ.
Араксъ—10 հատը 3 կոպ. Марсъ—20 հատը 5 կոպ.

Խնդրում ենք փորձել։ Ծախվում է ամենուրեք։

ԾԽԱԽՈՏԻ-ԳՈՐԾԱՐԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԱՆ
„ԵՂԲ. ՄԻՅԼԱՆԵԱՆՆԵՐ"
(Ե. Հ. Կ.) (տա.) 155. 25—2

ԵՍ, ԱՆՆԱ ՉԻԼԼԵԱՐ,

աճեցրել եմ իմ անսովոր երկար (185 սանտիմետր երկար.) մազերս—որ յիշեցնում է Լօրէլէյի մազերը—շնորհիւ իմ հնարած առանձին պոմադայի 14-ամեայ ԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՆ։ Այդ պոմադան ճանաչված է լաւ միջոց մազերը թափվելու դէմ, միևնոյն ժամանակ նպաստում է նրանց աճման և արմատների ամրացման։ Տղամարդիկ, շնորհիւ այդ պոմադայի, ունենում են խիտ և ճոխ երկար միրուք, նոյնպէս և (մինչև անգամ կարճ ժամանակեայ գործածութիւնից յետոյ) գլխի մազերի և միրուքի իսկական փայլ։ Միևնոյն ժամանակ պոմադան պահպանում է մազերը շուտ ճերմակելուց, նոյնիսկ ծերութեան ժամանակ։

Բանկայի գինը
3 եւ 5 րուբլի

Գլխաւոր պահեստը ԴԵՂԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՌԵՒՏՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ մէջ, Թիֆլիսում, Բագւում և Բաթումում։ (Շ. Հ.) 85. (տա.) 25—6

ԶՈՒԲԱԼՕՎԵԱՆ ԺՈՂՈՎՐԴ. ՏՈՒՆ

Այսօր, հինգշաբթի, փետր 11-ին կանանց բարձր դասընթացքների ունկնդրուհիներին փոխադարձաբար օգնող ընկերութեան միջոցները շատացնելու համար տեղի կունենայ

ԵՐԵԿՈՅԹ
Բարեհաճ մասնակցութեամբ
Վան-Բրանդի
և ուրիշների։
I
ВСТРѢЧА
Դրամ. էտիւդ 1 գործ., Սարմատովի
II
ՀԱՄԵՐԳԱՅԻՆ ԲԱԺԻՆ

Սկիզբն է երեկ. ժ. 8$^{1}/_{2}$-ին
Տեղերի գները 2 ր. 50 կ. մինչև 30 կ.։ Կարգադրիչներ՝ Մարիամ Նազարբէգեան և Ե. Պետրոպավլովսկայա։
(տա) 164. 1—1

ԼԵՕՆ
Գանովսկայա փողոց № 7.
ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՄԵԾ
ՊՈՐՏՐԷՏՆԵՐ
Մեծացվում են ամեն տեսակ պատկերներից։
ԳՆԵՐԸ ՇԱՏ ՄԱՏՉԵԼԻ ԵՆ

Գործը ցուցադրված է Դորոժնովի մագազինի մօտ, անկիւնում, եւ արուեստանոցում՝ Կովկասի Տօվարիշչեստվօյի շարքով, Գանովսկայա փողոց № 7։

Պորտրէտները այնտեղ ևեթ դրվում են շրջանակների մէջ։

Լուսանկարիչներից եւ սիրողներից ընդունվում է մեծ պորտրէտների եւ նեգատիվների ռետուշի գործ։

Նոյն արուեստանոցում տրվում են ռետուշի դասեր երկու սեռի անձանց համար. պայմանների մասին դիմել՝ Тифлисъ, Гановская ул. № 7, Художественное Ателье „ЛЕОНЪ"
Леону Теръ-Григорянцу.
(Հ.Կ.) (տա.) 161. 2—1

ԱՐՏԻՍՏԻԿ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ
Երկուշաբթի, փետրվարի 15-ին
Տեղի կունենայ յօբելեանական Ներկայացում
Ի ՊԱՏԻՒ
ՏԻԿԻՆ Վ. ՄԵԼԻՔԵԱՆԻ
25-ԱՄԵԱՅ ԲԵՄԱԿ. ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ
I
ՊԻՊՕ
Բ. գործողութիւն
Մասնակցում են.—Տ. Մելիքեան, պ. պ. Ա. Զարգարեան, Մամիկոնեան, Միրզոյեան, Յարութիւնեան, և այլք։
II
(Վրացերէն լեզուով)
ԱՐԴԻՒՆԱՒՈՐ ՊԱՇՏՕՆ
Դ. գործողութիւն
Բարեհաճ մասնակցութեամբ—տ. տ. Մելիքեանի, Գաբունիա-Ցագարելիի, Տասօ Աբաշիձէի եւ պ. Գվարամձէի։
Ռէժիսոր՝ Կ. Մեսխի
III
Յօբելեանական հանդէս
IV
ԻՐԱՒԱԶՈՒՐԿ ԿԻՆԸ
Գ. գործողութիւն
Մասնակցում է ամբողջ խումբը։
ՏԵՂԵՐԻ ԳԻՆԸ ԲԱՐՁՐԱՑՎԱԾ Է
Սկիզբը երեկոյեան ժամը 8 ին
Ռէժիսոր՝ Օ. Մայսուրեան

Որովհետև տոմսակների մեծ պահանջ կայ, ուստի վաղօրօք ցանկացողները կարող են գրվել Արտիստական թատրոնի կասսայում։

Ուղերձների և շնորհաւորութիւնների համար մինչև փետրվարի 12-ը պիտի յայտնել բժ. Ա. Զարգարեանցին (Сергѣевская, д. Саркисова).

Յօբելեանական մասնաժողովի նախագահ՝ Ա. Զարգարեան։

Անդամներ՝ Տ. տ. Ե. Ռոստոմեան, Վ. Աղամալեան, Ն. Գաբունիա-Ցագարելի, իշխ. Ն. Էրիստով, իշխ. Կ. Մակաեվ, պ. պ. Տ. Յովհաննիսեան, Մ. Զաքար, Մ. Աթաբէգեան, Խր. Տէր-Սարգսեան և Ա. Յարութիւնեան։
(Ե. Հ.) (տա.) 150. 2—2

ԲԺԻՇԿ
Գ. Յ. ՄԵԼՔՈՆԵԱՆ
Ներքին եւ վիրաբուժական (խիրուրգ.) հիւանդութիւններ.
Ընդունելութիւնը (առաւօտեան ժ. 11—1. (երեկոյեան ժ. 5—7.
Երևանեան հրապարակ—Պուշկինսկ. փ., № 1.
(Ե. Հ. Կ.) (տա.) 1045. 100—58

ԱՐՀԵՍՏՆԵՐԸ ԴՊՐՈՑՈՒՄ

I

— Արդեօք ծխական դպրոցը ունի՞ իրաւունք բանալու արհեստագիտական բաժանմունք։ Կարո՞ղ է արդեօք նա հիմնել արհեստանոցներ և սովորեցնել՝ օրինակ՝ դարբնութիւն, հիւսնութիւն, ատաղձագործութիւն, կօշկակարութիւն, ջուլհակութիւն և այլն, կամ կազմակերպել ցուցադաշտեր, կրթական ֆերմաներ, բանջարանոցներ և այլն։

Այդ հարցը առաջ էլ ունէր իր նշանակութիւնը, բայց մանաւանդ նա դարձել է կարևոր վերջին ժամանակներում, երբ արհեստների ներմուծման և ուսուցման անհրաժեշտութիւնը ըզգացվել է աւելի մեծ չափով և ծաւալով քան առաջ։

Մինչև այժմ մեր ծխական դպրոցը հետամուտ չէ եղել բանալու այդպիսի բաժանմունքներ և միայն մի արհեստ երբեմնապէս տեղ է տուել իր պատերի մէջ. դա կարուձևն է եղել և ձեռագործը, որոնք սովորեցվել են իգական դպրոցներում։ Ծխական դպրոցների կանոնադրութիւնը չէ պարունակել յատուկ ցուցում և իրաւունք արհեստների ուսուցման մասին։

Նոյն հարցին դրական պատասխան է տալիս դպրոցական այն կանոնադրութիւնը, որ մշակվում է ներկայումս կառավարութեան և հայոց հոգևոր իշխանութեան խորհրդակցութեամբ։

Նոր ծրագիրը տալիս է իրաւունք բանալու գիւղատնտեսական և արհեստագիտական բաժանմունքներ։

Նա դեռ ծրագիր է, դեռ չէ դարձել օրէնք. բայց բոլորովին հաւանական է, որ ծրագրի այդ մասը չի հանդիպի ոչ մի արգելքի և խոչընդոտի, որովհետև այդ կէտի վերաբերութեամբ չեն եղել հակաճառող տարկութիւններ ոչ մի կողմից։

Նոյն իրաւունքը տրված է այժմ պետութեան մէջ գոյութիւն ունեցող տարրական դպրոցներին, և արհեստագիտական բաժանմունքների բացումը՝ իրաւունքի կողմից՝ բոլորովին դիւրացվել է։

Այդպիսով արհեստների ուսուցման խնդիրը շուտով կը դառնայ հերթական քննութեան առարկայ մեր դպրոցական շրջաններում։

Շատ դպրոցական հոգաբարձութիւններ կը տան իրանց հարց՝ բանալ թէ՞ չը բանալ արհեստագիտական բաժանմունքներ։

Անշուշտ, դա կամովին մի գործ է և բաժանմունքների բանալը կախված կը լինի այն բանից, թէ արդեօք կա՞ն նրանց պահպանելու համար յատուկ նիւթական միջոցներ, հմուտ ղեկավարներ և տեղական յարմարութիւններ։

Պէտք է նկատել, որ արհեստագիտական բաժանմունքների գործունէութեան աջող կազմակերպութիւնը դըժուար գործերից մէկն է, որը կը պահանջի դպրոցական վարչութիւններից առանձին հմտութիւն և ուշադիր վերաբերմունք։

Որպէսզի արհեստը իւրացվի և յետոյ մուտք գործի կեանքի մէջ, կարևոր է, որ նա դրված լինի թէ կրթական և թէ տեխնիկական կողմից այնպիսի պայմանների մէջ, որ աշակերտին աւանդված գիտութիւնը լինի հաստատուն և կեանքի մէջ գործադրելի։

Եւ անշուշտ, անհրաժեշտութիւն կը զգացվի, որ արհեստների դասաւանդութեան և առ հասարակ արհեստագիտական բաժանմունքների կազմակերպութեան ղեկավարութիւնը յանձնված լինի ձեռնհաս անձերի, որոնք աչալուրջ կերպով հետևեն արհեստագիտական կրթութեան կատարեալ իւրացման և նպաստեն սովորածների նախնական քայլերին տալու աջող ընթացք կեանքի մէջ։

Եւ մենք կարող ենք կտրականապէս յայտնել, որ աւելի լաւ է բոլորովին բացակայեն դպրոցներից արհեստները և չը բացվեն արհեստագիտական բաժանմունքներ, քան նրանք հանդէս գան վատ կազմակերպութեամբ և անձեռնհաս ղեկավարութեամբ։

Ա. Քալանթար

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԻՒՐԵՐԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Մոսկվա, 9 փետրվարի

Պետական Դումայի անդամների ուղեկցութեամբ եկան ֆրանսիացի պարլամենտականները։ Կայարանում հիւրերին դիմաւորեցին քաղաքագլուխը, վարչութեան անդամները, ձայնաւորների մի խումբ, բօրսայի կոմիտէտի նախագահը և ֆրանսիական գաղութը՝ գլուխ ունենալով հիւպատոսին։ Առաջին ողջոյնից յետոյ բացին Արքայական սենեակները։ Պատրաստված աւտոմօբիլներով հիւրերը դիմեցին «Ազգային հիւրանոցը»։ Փողոցում կանգնած էր հազարաւոր ամբոխ, որ ողջունում էր հիւրերին։

«Ազգային հիւրանոցում» նախաճաշելուց յետոյ, ուր հիւրերին ողջունեց քաղաքագլուխը, ֆրանսիական պարլամենտականները դիտեցին Մոսկվան։ Հիւրերին ողջունում էր ահագին ամբոխը, որին Դէստուռնէլ-դը-Կօնստանը դիմեց շնորհակալութեան խօսքերով։ Քաղաքագլխի և ֆրանսիական հիւպատոսի ուղեկցութեամբ հիւրերը ռուսական եռաձի կառքերով գնացին Բերդը, դիտեցին Չուդովի վանքը, այցելեցին Մեծ Իշխան Սերգէյ Ալէքսանդրովիչի դամբարանը, իրանց անունները գրեցին Մեծ Իշխանուհի Ելիզավետա Ֆէօդորովնայի այցելուների գրքում, դիտեցին Հրացանի պալատը, Բերդի պալատները։ Հիւրերի մի մասը դիտեց Բերդի տաճարները։ Սենատի հրապարակի վրա բազմամարդ ամբոխը ողջունում էր հիւրերին «vive la France» բացականչութիւններով։

«Էրմիտաժ» հիւրանոցում տեղի ունեցաւ բանկէտ ֆրանսիական գաղութի կողմից։ Հիւրերին հանդիպեցին ծափահարութեամբ։ Ներկայ էին ֆրանսիական գաղութի առևտրա-արդիւնաբերական աշխարհի 150 ներկայացուցիչներ։ Առաջին բաժակն առաջարկվեց Թագաւոր Կայսրի կենացը և ցնծութեամբ ընդունվեց ազգային օրհներգով։ Ֆրանսիական հանրապետութեան նախագահի համար բարձրացված բաժակից յետոյ երգվեց մարսէլիէզը։ Բօրսայի կոմիտէտի նախագահը ճառ արտասանեց, որ վերջացրեց այս խօսքերով. «Կեցցէ՛ Ֆրանսիան և ֆրանսիական ժողովրդի ներկայացուցիչները»։

Ֆրանսիական գաղութի ներկայացուցիչը շնորհակալութիւն յայտնեց Ռուսաստանին իբրև երկրորդ հայրենիքի։ Դէստուռնէլ-դը-Կօնստանն ասաց. «Եթէ ֆրանս-ռուսական միութիւնը չը կապէր կառավարութիւնը, նրան կը կապէր ժողովուրդը։ Մի ձգտում, մի սիրտ, մի զգացմունք են կապում ռուսներին և ֆրանսիացիներին։ Բայց միմիայն իդէալները չեն, որ միացնում են միմեանց հետ ժողովուրդներին, այլ և այն ռէալ շահերը, որոնց մասին խօսեց բօրսայի կոմիտէտի նախագահը»։

Խօսեցին նոյնպէս քաղաքագլուխը, ֆրանսիական հիւպատոսը, Լէրուն և Մենիէն, Մակլակովը և Սաւխովիչը։

Դումայի դահլիճներում կայացաւ ռաուտ։ Ներկայ էին հազար մարդ, մայրաքաղաքի իշխանութիւնները, բազմաթիւ տիկնայք։ Քաղաքագլուխը բաժակներ առաջարկեց Կայսրի, ֆրանսիական հանրապետութեան նախագահի, հիւրերի համար։ Կօնստանը՝ Մոսկվայի համար։ Ռաուտը վերջացաւ համերգային բաժնով։ (Հ. Գ.)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Լօնդօն, 9 փետրվարի

Համայնքների պալատ։ Պատասխան ուղերձի վիճաբանութիւնների ժամանակ Բալֆուրը գոհունակութիւն յայտնեց ծովային ծրագրի մասին։ Ասկվիտը իր ճառում ասաց, որ գահից ոչ մի երաշխաւորութիւն չէ պահանջում, որովհետև պատասխանատու պետական գործիչը պարտաւոր է քաղաքական հարցերի քննութեան ժամանակ որքան հնարաւոր է չը շօշափել միապետի անձնաւորութիւնը և գահի իրաւունքները. վերջում Ասկվիտը ասաց. «Կառավարութիւնը իր վիճակը կապեց բիւջէի և լորդերի պալատի veto-ի իրաւունքի վերաբերութեամբ եղած բանաձևերի հետ։ Այդ հարցերը հանդիսանում են կառավարութեան քաղաքական ծրագրի անհրաժեշտ բաղկացուցիչ մասերը։

Իռլանդացի պատգամաւոր Րէդմօնդը յայտնեց, որ եթէ կառավարութիւնը կերաշխաւորէ, որ veto-ի օրինագիծը օրէնք կը դառնայ այս տարի, այն ժամանակ նացիօնալիստները ձայն կը տան յօգուտ բիւջէի։

Պահպանողական լրագիրները յայտնում են, որ կառավարութեան անաջողութիւնն աւելի մեծ է, քան կարելի էր սպասել։

Լիբէրալ լրագիրները յոռետեսութեամբ քննում են Ասկվիտի յայտարարութիւնը, կարծում են, որ կառավարութիւնը կընկնի, եթէ նրան չաջողվի համաձայնութիւն կապել նացիօնալիստների հետ։ (Հ. Գ.)

Բեռլին, 9 փետրվարի

Վիլհէլմ կայսրը ունկնդրութեան ընդունեց Էրենտալին։ (Հ. Գ.)

Բեռլին, 9 փետրվարի

Կայսրը Էրենտալին շնորհեց գոհարազարդ սև արծւի շքանշան։ (Հ. Գ.)

Պարիզ, 9 փետրվարի

Պիշօնն ընդունեց Մարօկկօյի դեսպան Էլմօկրին, որ յանձնեց Մուլէյ-Հաֆիզի նամակը։ (Հ. Գ.)

Սէվիլիա, 9 փետրվարի

Թագաւորը հրովարտակ հրատարակեց քաղաքական յանցաւորների ներման մասին։ (Հ. Գ.)

Ֆիլադէլֆիա, 9 փետրվարի

Էլեկտրաքարշի գործաթող ծառայողների պարագլուխը ձերբակալվեց։ Կենտրոնական միութեան պրեզիդիումը հրատարակեց ընդհանուր գործադուլ։ (Հ. Գ.)

Թիֆլիս, 9 փետրվարի

Ի հերքումն լրագրական այն տեղեկութիւնների, թէ իբր Թիֆլիսի ժուռնալիստներից մի քանիսը կաշառված էին քաղաքային վարչութիւնից բելգիական ընկերութեան էլեկտրաքարշը պաշտպանելու համար, քաղաքային վարչութիւնը ճշմարտութիւնը վերականգնելու համար յայտնում է, որ նա ինքը բացեց էլեկտրաքարշի վարչութեան հետ կապված գաղտնի համաձայնութիւնը դումայի մի ձայնաւորի հետ, որ գործում էր երկու ժուռնալիստների կողմից, և հաղորդեց դումային գաղտնի պայմանագրի մասին, որի հետևանքն եղաւ ձայնաւորի հրաժարականը։ (Հ. Գ.)

Վիէննա.—Արժանահաւատ աղբիւրից հաղորդում են, որ Ռուսաստանի և Աւստրիայի բանակցութիւններն ընթանում են բոլորովին կանօնաւոր կերպով։ («Ե.»)

ՅՈՒՆԱՍՏԱՆ ԵՒ ԿՐԵՏԷ

Աթէնք, 9 փետրվարի

Եկաւ գահաժառանգ Նիկոլան։

«Ատենէ» լրագրի ասելով, բանակցութիւններ են սկսվել ազգային ժոզովը փետրվ. 15-ին գումարելու մասին։ (Հ. Գ.)

—

Ֆրանկֆուրտ Մ. վ., 9 փետրվարի

«Ֆրանկ. Ցայտունգին» հեռագրում են Աթէնքից. «Կանէի գերմանական հիւպատոսը կրետական կառավարութիւնից պահանջեց յանձնել կրետական ժանդարմերիայի բոլոր յոյն օֆիցէրների ցուցակը։ Զափազանց երկիւղ կայ, որ մեծ պետութիւնները պահանջելու են յետ կանչել այդ օֆիցէրներին»։ (Հ. Գ.)

—

Բեռլին, 9 փետրվարի

Պաշտօնական շրջաններում հերքում են Կանէից ուղարկված հեռագիրը։ (Հ. Գ.)

—

Վիեննա.—Այստեղ հաղորդում են, որ յունական նաւատորմը աշկարա ապստամբվել է։ («Р. В.»)

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Լօնդօն, 9 փետրվարի

Րէյտէրին հեռագրում են Կ. Պօլսից. «Աբդիւլ Համիդի մահվան լուրը հերքվում է»։ (Հ. Գ.)

—

Կ. Պօլիս.—Բ. Դուռը պատուիրագրեց բոլոր Թիւրք դեսպաններին՝ առանձին աչալրջութեամբ հետևել ռուս-աւստրիական բանակցութիւններին։ («Б.»)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Թեհրան.—Լուրջ լուրերի համեմատ, ռուսական միսիան յայտագիր ներկայացրեց, որ Ռուսաստանին կոնցէսիա տրվի մարդատար և ապրանքատար աւտոմոբիլային երթևեկութեան համար Էնզելի-Թէհրանեան ճանապարհով, գերակշիռ իրաւունքներ նաւագնացութեան համար Ուրմիայի լճի վրա և այլ շահագործութիւններ այդ շրջանում։ Լիճը Իմամ-Ղուլի-Միրզայի տոհմական կալուած է համարվում, որը հիմնել է այստեղ արտասահմանեան դրամագլուխներով շոգենաւային ընկերութիւն, որը կարող է ահագին եկամուտ բերել։ Ռուսաստանը, դաշնագրի զօրութեամբ, օտարազգիներից աւելի բարձր իրաւունքներ ունենալով, ի նկատի ունենալով վերոյիշեալ ընկերութեան կազմակերպութիւնը արտասահմանեան փողերով՝ պահանջում է այժմ, որ իրան տրվի այդ ձեռնարկութիւնը։

Զինուորական մինիստրութիւնը երկու բանակի է բաժանվել՝ հին և նոր պարսիկներ։ Առաջինների գլուխ է կանգնած զինուորական մինիստրութեան անձնական կազմի հրամանատար Զիա-Էլ-Մուլքը, հին սեպուհի տիպ, տգէտ։ Նա խմբել է իր շուրջը հին սարդարներին և էմիրներին։ Երիտասարդ պարսիկ զինուորականների գլուխն է զինուորական մինիստրի օգնական խան Եամին Նիզամը, որը ստացել է, որպէս և իր համախոհ օֆիցէրների մեծամասնութիւնը, եւրօպական կրթութիւն Կ.Պօլսում։ Հին պարսիկ զինուորականները ամեն կերպ խոչընդոտ են հանդիսանում զինուորական վերանորոգութիւններին։

Յայտնի աւազակ Նաիբ-Հուսէյնը, որը վեց ամիս շարունակ սարսափահար էր անում և կողոպտում էր գիւղեր Քէշանի շրջականներում, հեռագիր ուղարկեց մէջլիս իր խոնարհութիւնը յայտնելով։ («Р. В.»)

ՍԱՂԻՄԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍՆԱԿԻ ԼՈՒԾՈՒՄԸ

Կ. Պօլիս, 1 փետրվարի

Ուրախութիւն է ասել, որ պատրիարք Դուրեանի հրաժարականի հարցի հետ զուգընթացաբար լուծվում է չարաբաստիկ «սաղիմական հարցի» մի գործեան հանգոյցը, այն է՝ Երուսաղէմի ս. Յակոբի վանքի 3 ըմբոստ վարդապետների արտաքսումը համնում է իր ցանկալի վախճանին։ Թիւրք կառավարութիւնը ինքն էր յանցաւոր, որ Երուսաղէմի հարցը այսչափ ձգձգվեց։ Այո, կառավարութիւնն այս հարցը կապեց Դուրեան պատրիարքի հրաժարականի հարցին ու չը լուծեց այն՝ մինչև որ պատրիարքը վերադարձաւ իր պաշտօնի գլուխը։ Ամեն անգամ, որ վարչութեան կողմից պահանջվում էր այդ ըմբոստ վարդապետների՝ վանքից արտաքսումը, կառավարութիւնն ասում էր՝ «Լաւ, այսօր... վաղը...», և գաղտնի հեռագրում էր Երուսաղէմի կառավարչին՝ գործել յամրաբար և չը շտապել։ Եւ ճիշդ որ շատ վարպետօրէն գործեց սա։ Բայց ինչ և իցէ։ «Լաւ է ուշ, քան երբէք», —ասում է առածը։ Այժմ այդ վարդապետները (չը գիտեմ սակայն, թէ իրանց կանանցով ու երեխաներով միասին) կառավարութեան հսկողութեամբ բերվելու են այստեղ և քիչ օրից քաղաքումս կը լինեն։ Ազգ. վարչութիւնը նրանց պէտք է փակէ Երուսաղէմատանը՝ դատելու և պատժելու։

Նոյնը պիտի անէ նաև նրանց հրամանատար Ղևոնդ վ. Մաքսուտեանին, որ Շիշլիի բարձունքից աջ ու ձախ փողեր տեղալով Սուրէննեան Աւետիսի, Սմբատ Բիւրատի, Արամ Անտոնեանի նման պնակալէզ յեղյեղուկների գրչով ու լեզուով ամեն կերպ խայտառակ հրամաններ էր արձակում Երուսաղէմ ըմբոստ վարդապետների արարքը քաջալերելու և նրանց շարունակ գրգռելու ազգ. ժողովի որոշումների դէմ։

Էհ, արդարութիւնը պէտք է որ իր տեղը ժամանէ վերջապէս։ Ղևոնդ վ. և Գէորգ եպ. Երէցեան շատ ու շատ խաղ խաղացին հին րէժիմ օրով. էլ բաւ է. պէտք է վերջ տալ այս տխրահռչակ հերոսների կատարած ազգակործան խայտառակութիւններին, որոնք երբե կեղ, երբե փտախտ տիրում էին ազգի սրտին ու թոքերին։

Վարդապետներին վանքից դուրս շպրտելով միայն չէ վերջանում, սակայն, ազգի պաշտօնը՝ «սաղիմական խնդրի» լուծման գործում, այլ անհրաժեշտ է լուրջ բարեկարգութիւն մտցնել Երուսաղէմի վանքում և դնել մի նոր օրէնք՝ ազգ. ժողովից վաւերացված, օրէնք՝ որի գլխաւոր սկզբունքը պէտք է լինի միաբանների առանձնական գրպան ունենալը ոչ մի կերպ չը թոյլատրել. գրպանը, գանձը մէկ և բոլորինը պիտի լինի, ինչպէս է Մխիթարեանների վանքերում։ Այսպիսով կարելի է վերջ տալ միաբանների խայտառակ շահամոլութիւններին, իրարատեցութիւններին և սկսել այնտեղ գրասիրութեան, ուսումնասիրութեան մի նոր դարագլուխ։

Թուխակ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Կարս, 4 փետրվարի

Ներկայումս Կարսում դասախօսութիւնների և ներկայացումների սէզոն է։ Տրվում են ոչ միայն հայերէն և ռուսերէն, այլև յուներէն ու վրացերէն լեզուներով ներկայացումներ, որը այստեղի համար նորութիւն է համարվում, յոյն, մանաւանդ վրացի ազգաբնակութեան սակաւութեան պատճառով։

Մօտաւորապէս 2 ամիս կայ, որ տեղիս մի խումբ երիտասարդների նախաձեռնութեամբ ամեն կիրակի լինում են դասախօսութիւններ տեղիս ծխ. դպրոցի դահլիճում։ Հետաքրքրական էին Անիի մասին եղած դասախօսութիւնները, որոնք գրաւել էին երկսեռ բազմութիւն։ Դասախօսն էր դերասան Ա. Վրոյր։

Դասախօսութիւնները կազմակերպողները խոստացել են ճարտարապետ Թ. Թորամանեանին կամ պրոֆ. Մառրին հրաւիրել Կարս՝ Անիի մասին աւելի ընդարձակ տեղեկութիւններ հաղորդելու և կարսեցիների հարցասիրութեանը բաւարարութիւն տալու նպատակով։

Դերասան Վրոյրը վերջերս այստեղ մի շարք հանրամատչելի ներկայացումներ տուեց։

Գաւառական Թղթակից

—

Կօկանդ, 4 փետրվարի

Յունվ. 31-ին, նախագահութեամբ Ներսէս քահ. Աբրահամեանցի, կայացաւ տեղիս հայոց ծխ. ժողով, ուր քննվեց ի միջի այլոց Սկօբելէվից ստացված մի բողոք հոգաբարձական ընտրութեան դէմ. չը նայած որ Աստրախանի Թեմ. իշխանութիւնն արդէն հաստատել է ընտրված հոգաբարձուներին, անուամենայնիւ քննութեան առնվեց այդ բողոքագիրը։ Ժողովը թեր և դէմ կարծիքներ լսելուց յետոյ գտաւ, որ բողոքն արդար է և պէտք է ուշադրութեան առնել. նախագահն այդ մասին յայտնեց, թէ գրել է կօնսիստօրիային և մինչև կօնսիստօրիայից պատասխան ստանալը՝ պէտք է սպասել։

Դեռ նորընտիր հոգաբարձուները պաշտօնի չը կոչված՝ ժողովրդի մէջ լսվում են դժգոհութեան ձայներ դէպի ընտրվածները և ձգտումն է նկատվում՝ ինչ էլ որ լինի՝ բեկանել տալու արդէն կօնսիստօրիայից հաստատված ընտրութիւնը։

Պ. Մանուչարեան

—

Նուխի, 28 յունվարի

Հոգ. կառավարութեան մէջ ամուսնալուծութեան վերաբերեալ կուտակածս խնդիրներից, դրանց առիթով կատարված քննական գործերից և մանաւանդ անցեալ ամառ վիճակիս մի շարք գիւղեր գործով շրջելիս լսածներիցս և տեսածներիցս եկայ այն տխուր եզրակացութեան, որ մեր գիւղական նախկին պարկեշտ ժողովուրդը միանգամայն ընկել է բարոյապէս. էլ ընտանեկան սրբութիւն, էլ նամուս, էլ հաւատ ու երկիւղածութիւն ու ամօթ չը կայ նրանում։ Ո՞վ է տեսել հայ կինը, մանաւանդ գիւղական ամօթխած, միամիտ կինը, տարիներ շարունակ ամուսնու հետ սիրով ապրելուց յետոյ, զաւակ անգամ ունենալուց յետոյ՝ թողնի ամուսնուն, երեխային և գնայ կենակցի մի ուրիշի հետ առանց յարգելի պատճառի, և այդ կատարվի ծնողների համաձայնութեամբ և համագիւղացիների հաճութեամբ։ Ո՞վ է տեսել, որ գիւղացի երիտասարդը 6—7 տարի ամուսնու հետ ապրած համագիւղացու հարսին փախցնի իր տուն, կենակցի նրա հետ ու պարծենալով էլ շրջի գիւղի մէջ և չունենայ կշտամբողներ, յանդիմանողներ, այլ ընդհակառակը մեծ թւով, և այն՝ գիւղի երեւելիներից, պաշտպանողներ ունենայ։

Մի 10 –15 տարի առաջ ամեն մի գիւղական համայնք մի ընտանիքի պէս էր ապրում, մէկի կինը միւսների համար քոյր էր, մէկի աղջիկը միւսների զաւակ, գիւղի պառաւները բոլորի համար մայր, ծերերը բոլորի համար հայր, հարուստները՝ գիւղի համար բարերարներ։ Իսկ երբ վերացաւ սրբութիւնը, մուտք գործեց պղծութիւնը, չքացաւ սէրը, եղբայրութիւնը, բարոյական անկումին հետևեց նիւթական անկումը։ Այսօր այլևս մէկի վիշտը, դժբաղդութիւնը միւսների համար ցաւ չէ. առաջ երբ մէկի լծկան գոմէշն էր սատկում, միւսները «ուռմաջիով» (խմբով միասին) նրա վար ու ցանն էին անում. այդպէս՝ եթէ արտն էր մնում հնձելու, կալսելու, նրա արտն էին հնձում, կալսում. մէկը հարսանիք էր անում, նրա ծախքերը թեթևացնելու համար հարսանիքի օրը «կանչ» էին անում, ամեն մէկը թէ փող և թէ ուրիշ նիւթ՝ կարպետ, խուրջին, ջուալ, խոփ և այլ նուէրաբերում էր փեսային. այժմ այլևս չը կան այդ օգնութիւններն իրար. այժմ եթէ մէկը դժբաղդութեան ենթարկվեց՝ ստիպված է թողնել տուն, ընտանիք կամ մուրացկանութիւն անել կամ պանդխտութեան ցուպն առնել ձեռքը։ Այժմ խնկական գիւղի հայրեր չը կան, որ իրանց ազդեցիկ և սիրով լի յորդորանքներով իրար օգնելու հրաւիրեն. այժմ ամեն մէկը իրանց թոյլի հոգէառ հրեշտակն է։

Սակայն ինչո՞ւ է այս այսպէս, ինչն է այս բոլորի պատճառը։

Մեր համեստ կարծիքով, մասամբ նախ՝ գիւղացիների հեշտ և հեշտ հարստանալու տենչով բռնված մեծ քաղաքներ, մանաւանդ Բագու գնալը, որտեղ տգէտ գիւղացու համար տեղ է լինում միմիայն գործարաններում, ուր տեսնում են անառակութիւններ և անբարոյականութիւններ, որը բերելով գիւղ առանց քաշվելու տարածել են և տարածում են. երկրորդ՝ կենդանի խօսքի և գեղեցիկ օրինակի բացակայութիւնը. երրորդ՝ դպրոցներ չունենալը. չորրորդ՝ այրի քահանաների կնապահութիւնը, որ խիստ տարածված է մեր շրջանում և որը խիստ վատ օրինակ է գիւղացիների համար։

Գիւղական հայ դպրոցը մեծ օգուտներ կարող է տալ գիւղին։

Հայ վարժապետը, գաղափարական հայ ուսուցիչը կարող է կեանքը բարեփոխել գիւղում։ Բայց ո՞ւր է դպրոց և մի՞թէ հեշտ է ներկայիս գիւղում դպրոց բանալը։

Թէև ներկայիս Նուխու վիճակի համարեա բոլոր գիւղերում ընտրված են ծխական հոգաբարձուներ և այդ հոգաբարձուներին հասկացված է, որ իրանց պարտականութիւններից մէկն էլ դպրոց բանալն է ու պահպանելը, բայց մի՞թէ մեր ծխական հոգաբարձուները վերև յիշված գիւղացիներից չեն։

Եթէ ուզում ենք դպրոցներ ունենալ մեր գիւղերում, պէտք է Նուխու վիճակն ունենայ իր առանձին տեսուչը և ոչ այժմեան նման մի թեմական տեսուչ, որը որքան էլ բարի ցանկութիւններով օժտված լինի և նոյնիսկ անձնազոհ մէկը՝ չէ կարող նոր դպրոցներ բանալ, որովհետև գիւղում դպրոց բանալու համար մի տարվայ ընթացքում այն գիւղն առնուազն երեք անգամ պէտք է մտնել և ամեն անգամ օրերով, շաբաթներով նոյնիսկ մնալ։ Օրինակներ թէ անցեալից գիտենք և թէ ներկայից. 1908 թ. ամառը վիճակիս փոխանորդը Ճալէթի վանքումն էր ապրում. առիթից օգտվելով հայրսուրբը խօսում է շարունակ գիւղացիների հետ դպրոց բանալու մասին, և նրան աջողվում է համոզել ժողովրդին և բանալ դպրոց, որ այժմ երկրորդ տարին է գոյութիւն ունի։

Մօտ ապագայում Շուշում թեմական խորհրդի անդամներ ընտրելու համար վիճակիցս ընտրված են պատգամաւորներ. մեզ մնում է յուսալ, որ ապագայ թեմական խորհուրդը իր հոգսերից գլխաւորը կը շինի գիւղերում դպրոց բանալը և նրանց պահպանելը։ Իսկ միւս ցաւերին դարման անելու ժամին երևի կը մտածեն նրանք, որոնց պարտքն է։

Փէք

ԲԱԳՈՒԻ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

III

Բագու, 3 փետրվարի

Հայ թատրոնը մեռնում է...

Այս աղաղակն է, որ լսվում է այժմ ամեն կողմից. և կովկասահայ մտաւոր կենտրոնում, Թիֆլիսում, թատրոնի բարեկամները խելք-խելքի տուած միջոցներ են փնտռում նրա կործանման առաջն առնելու, փրկելու նրան վերահաս մահվան ճանկերից, և այդ այն ժամանակ, երբ Թիֆլիսում միաժամանակ երեք խումբ գոյութիւն ունեն, որոնք շաբաթական երեք անգամ անընդհատ ներկայացումներ են տալիս։

«Թատրոնը մեռնում է...» գոչում է [illegible] կսկիծով Թիֆլիսի հայութիւնը, աչքերն արցունքով լցված, իսկ այդ նոյն րօպէին մենք, բագուեցիներս, մեր առօրեայ կեանքի գարշահոտ տղմի մէջ խորասուզված, կարծես թէ նոյնիսկ չը գիտենք, թէ ինչ է նշանակում հայ թատրոն, հայ ներկայացում։

Շուտով մի ամբողջ տարին կը լրանայ այն օրից, ինչ մենք հայերէն ներկայացման երես չենք տեսել և այդ բանը կարծես ոչ մի նշանակութիւն չունի մեզ համար. այնքան անտարբեր ենք վերաբերվում մենք նրան։

Միլիօնների անունից խօսող մեր քաղաքը իր հազարաւոր ինտելիգենտներով, «ազգային հռչակաւոր գործիչներով», կուլտուրական Միութեամբ ոչ թէ միայն չէ կարողանում պահպանել հայ թատրոնի գոյութիւնը Բագւում, ոչ թէ միայն չէ կարողանում մի դերասանական խումբ պահել, այլ նոյնիսկ չէ մտածում գոնէ կազմակերպել Թիֆլիսի կամ գաւառական շատ աննշան քաղաքների նման սիրողների մի խումբ և պարբերաբար ամիսը մի անգամ ներկայացում տալ։

Եւ այն ժամանակ, երբ մի երկու տարի առաջ, բացի դրամատիկական խմբից, գոյութիւն ունէին մի շարք սիրողների խմբեր, երբ շաբաթ չէր անցնում, որ մի քանի անգամ հայերէն ներկայացումներ չը լինէին, այսօր մենք նոյնիսկ «հայերէն ներկայացում» խօսքն էլ ենք մոռացել։

Մեր ինտելիգենցիան, մեր արտօնեալ դասակարգն աւելի լաւ է համարում ահագին խմբերով ցիրկ յաճախել, տասնեակ րուբլիներ ծախսել ըմբշամարտերը տեսնելու, կամ թէ օպերէտային ներկայացումներին ժողովարանի դահլիճը ծայրէ ի ծայր լցնել՝ մերկանդամ բալերինաների պարը տեսնելու, քան թէ մտածել միջոցներ գտնելու «ինչ-որ» թատրոնի գոյութիւնը ապահովելու համար։

Եւ եթէ մերթ ընդ մերթ էլ մի քանի խիզախ անհատներ են լոյս ընկնում մէկ-մէկ ներկայացումներ տալու համար, նրանք էլ, բացի ահագին ջանք ու չարչարանք գործ դնելուց, դեռ ստիպված են լինում իրանց գրպաններից մի քանի տասնեակ րուբլիներ էլ վնաս անելու և քոռ ու փոշման հեռանալու ասպարէզից։

Անցեալ տարի գոնէ մէկ-մէկ ներկայացումներ էր տալիս Սև-քաղաքի ժողովրդական տանը բանւորական սիրողների «Բնարիկ» խումբը, բայց այդ էլ այս տարի գլուխ չեկաւ, չը նայած խմբի բոլոր ջանքերին, որովհետև նաւթարդիւնաբերողների խորհուրդը, որին պատկանում է ժողովրդական տունը, չէ բարեհաճել այս տարի այդ տունը տալու սիրողների խմբերին, այլ վարձով տուել է «ժողովրդական զուարճութիւններ կազմակերպող ընկերութեանը», որի բիւրօկրատիկ վարչութիւնն էլ դեռ մինչև այժմ քնած է և յայտնի էլ չէ, թէ երբ կը զարթնէ...

Ահա թէ ինչ դրութեան մէջ է գտնվում թատրոնական գործը մեզ մօտ, որից հազիւ թէ նա կարողանայ դուրս գալ շնորհիւ մեր այլասերված հասարակութեան ինդիֆերենտ վերաբերմունքի դէպի ամեն մի հասարակական գործ։

Վ. Իրմաքեան

ԳՐԻԳՈՐ ՍԻՄՕՆԻՉ ԱՄԻՐԵԱՆ

—

Ամսիս 6-ի գիշերը յանկարծամահ եղաւ երևանցի Գրիգոր Սիմօնիչ Ամիրեան։

Հասարակական կեանքում բացառութիւն են կազմում այնպիսի անհատներ, որոնք անխօս, լռելեայն կերպով կատարում են այնպիսի պատասխանատու ֆունկցիաներ, որ իրօք, իրանց անհատական գոյութեամբ հանդիսանում են ժողովրդի և հասարակութեան ամենակարևոր մի անձնաւորութիւնը, նրա հասարակական գործերի դարձնողը։

Այսպիսի եռուն, ժրաջան և տոկուն մի անձնաւորութիւն էր նա։

Առաւօտից մինչև երեկոյ Գրիգոր Սիմօնիչը, որպէս մի անդուլ մեքենայ, անընդհատ շարժման մէջ էր։ Իր վաճառատնից քաղ. ուպրավա, ուպրավայից՝ հոգաբարձական պաշտօն, այնտեղից՝ տասնեակ ժողովներ, զանազան մասնաժողովներ, այդտեղից հասարակական մի որևէ գործ, մի որևէ կարիք և այլն։

Եւ այդ մարդը զարմանալի տոկունութեամբ ստանձնում և տանում էր հասարակական ամենածանր գործնական պարտականութիւններ՝ բոլորին լրացում տալով վերին աստիճանի ճշտապահութեամբ և ամենայն բարեխղճութեամբ։ Եթէ ասենք, որ նա մեր քաղաքային ուպրավայի ոգին էր և մեր ուպրավան յանձին Գրիգոր Սիմօնիչի շատ դէպքերում դուրս էր գալիս ամեն տեսակ գործնական դժուարութիւններից—դա չափազանցութիւն չէ։

Ժողովներում խօսել, ճառել, ճարտասանական շնորհք ցոյց տալ և զարմացնել ամենքին՝ մեզանում շատերը կան, բայց գործնական մարդ—դա մեզանում շատ քիչ է պատահում։

Նա ճառել չը գիտէր, մանաւանդ որ մի որևէ կրթութիւն չունէր, և հանգուցեալը որպէս կեանքի մարդ, մի քանի խելացի և փորձառու բացատրութիւններ տալուց յետոյ մխվում էր գործի ասպարէզ, առանց տարբերելու հասարակական գործը իր անձնականից։

Եթէ քաղաքում մի որևէ հասարակական գործ կար և ուպրավան մի որևէ ֆունկցիա ունէր կատարելու, առանց Գրիգոր Սիմօնիչի անկարելի էր և ամեն մի դժուարութիւն այդ մարդու տոկունութեան առաջ ոչնչանում էր։ Հանգուցեալը երկար ժամանակ վարել է քաղաքային ձայնաւորի պարտականութիւնը, և որպէս թեմական դպրանոցի հոգաբարձու՝ ամենակարևոր և աչքի ընկնող գործիչն էր, որ երկար տարիներ իր ուսերի վրա տարել է այդ հիմնարկութեան ամենաչարքաշ և դառն նեղութիւնները։ Որպէս վաճառական նա խիստ հեռատես և խելացի մարդ էր և իր գործունէութեամբ բաւական կարևոր տեղ էր բռնում քաղաքի բանկային հիմնարկութիւններում կատարվող գործառնութիւնների շրջանում։

Նա ապրում էր վերին աստիճանի պարզ, համեստ և հասարակ հագնված, և նրան յարգում էր քաղաքի ժողովուրդը որպէս մի պատուաւոր վաճառականի և անաչառ հասարակական գործչի։ Յանձինս հանգուցեալ Գ. Ամիրեանի, մեր հասարակութիւնը և հասարակական հիմնարկութիւնները կորցնում են մի խելացի և անկաշառ մարդու։

Հանգուցեալը հասարակաց նոր գերեզմանատանը իր ծախքով կառուցել է մի եկեղեցի և ուր երևի կամփոփվի նրա աճիւնը։

Հանգիստ բազմաչխատ ոսկերացդ, հասարակական ազնիւ և անկաշառ գործիչ։

Մուշ. Բագրատունի

Երևան, 7 փետրվարի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Թիֆլիսի ժուռնալիստների ընդհանուր ժողովից ընտրված մասնաժողովը խնդրում է բոլոր նրանց, որոնք կարող են որևէ տեղեկութիւն տալ այսպէս կոչված «մաուզէր սինդիկատի» մասին, ուղարկել այդպիսիները մասնաժողովին (Գրիբօեդօվսկայա, 22, բն. Բուկշտէյնի, ժ. 4—6-ը)։

◆ Եղեռնագործի ձեռքով անժամանակ զոհ գնացած երգչուհի Պապայեանը դեռ իր կենդանութեան ժամանակ յաճախ յայտնում էր իր ընկերներին, թէ մտադիր է մայրաքաղաքի կօնսերվատօրիաներում մի-մի թոշակաւոր հաստատել իր անունով։ Մահը արգելք եղաւ իրականացնելու նրա բարի ցանկութիւնը, և այժմ Թիֆլիսում ապրող՝ երգչուհու տաղանդը յարգողները վճռել են կատարել հանգուցեալի կամքը գոնէ փոքր չափով։ Նրանք մտադիր են Պապայեանի անուան թոշակաւոր հաստատել Թիֆլիսի երաժշտական դպրոցում։ Այդ նպատակով արդէն ժողոված է 900 րուբլի։ Պակասորդ գումարը մտադրութիւն կայ լրացնել համերգներով և ներկայացումներով։ Հէնց այս վերջին նպատակի համար տ. Բէլեցկայա-Փիթօեվայի խումբը ներկայացնելու է Րիշնէնի «Նահատակ կինը» պիէսը փետրվարի 20-ին։ Թիֆլիսումն է անցել հանգուցեալ երգչուհու բեմական գործունէութեան լաւագոյն շրջանը։ Այստեղ դեռ մինչև օրս էլ յիշում են այդ սքանչելի երգչուհուն, և պէտք է յուսալ, որ Թիֆլիսի հասարակութիւնը սրտանց արձագանք կը տայ այն մարդկանց կոչին, որոնք ուզում են մի բարի գործ կատարել անմահացնելու համար տաղանդաւոր երգչուհու յիշատակը, որ միշտ էլ անմահ կը մնայ այն բոլոր անձերի մտքի մէջ, որոնք առիթ են ունեցել լսելու հանգուցեալին և ստանալու էսթէտիկական անսահման բաւականութիւն։

◆ Յունվարի 5-ին Վերայի զառիվայրի վրա պատահած դժբաղդութեան զոհերից Միքայէլեան հիւանդանոցում ներկայումս բժշկվում են 3 հոգի, որոնք ծանր են ըզգում իրանց։

◆ Մեզ խնդրում են յայտնել, որ ամսիս 7-ից անյայտացել է շուշեցի Մովսէս Գասպարեան Սարգսեանցը, 16—17 տարեկան, խոշոր արտաքինով, աշակերտական բլուզով և լայն գոտիով, առանց վերարկուի, գլխարկը րէալական դպրոցի տարազով՝ առանց գերբի։ Տեղը իմացողներին խնդրվում է յայտնել Զաղէթեանի գործարանում, Մադաթեան կղզու վրա։

◆ Թիֆլիսի Հայ Գիւղատնտ. և Տնայն. Ընկ. հրաւիրել էր իր նիստին մի քանի ձեռնհաս վաճառականների խորհրդակցելու իր պատրաստած Ջուլհակային գործուածքների յատկութեան և վաճառահանութեան մասին։ Հրաւիրված անձերը՝ Աւետիսեան, Պօղոսեան, Գէւլբէնկեան և Սարգսեան գըտան գործուածքների որակը բաւարար և յայտնեցին, թէ ինչ գներով կարելի է նըրանց ծախել մեծ քանակով Կովկասի վաճառանոցում։ Բարւոք համարվեց յատուկ մի տեղ ունենալ ապրանքների վաճառման համար։ Միևնոյն ժամանակ պարզվեց, որ գորգագործութեան արդիւնքները դեռ մեծ պահանջի առարկաներ են արտասահմանեան շուկայում։

◆ Հինգշաբթի, փետրվարի 11-ին, կանանց բարձրագոյն կուրսերի ունկնդիրների միջոցները մեծացնելու նպատակով կը կայանայ երեկոյթ ժողովրդական տան մէջ տ. Վան-Բրանդի մասնակցութեամբ։ Երեկոյթը բաղկացած կը լինի երկու բաժնից. առաջին բաժնում կը խաղացվի Սարմատովի դրամատիկական էտիւդը 1 գործողութեամբ իրան հեղինակի և ռուսաց դրամատիկական խմբի սիրողների մասնակցութեամբ։ Երկրորդը կօնցերտային մասն է լինելու, որին կը մասնակցեն տ. Վան-Բրանդ, Մայսուրեան, Բրօքի, Սարմատով, Վալէնսկի, Դրօսման, Տոլմաչեան։ Երեկոյթի կարգադրիչուհիներն են՝ Ե. Պ. Պետրոպավլօվսկայա և Մ. Ի. Նազարբէգ։

◆ Անցեալ օրը խուզարկութիւն կատարվեց վրացի բանաստեղծ Ալ. Շանշիաշվիլիի բնակարանում։ Տարել են զանազան թղթեր և գրքեր, չը ձերբակալելով իրան։

◆ Փետրվարի 9-ին, երեկ. ժամը 4-ին, էլէքտրաքարշի վագոնը Օրթաճալայում շրջվել է. բարեբաղդաբար նստողներից ոչ մէկը չէ վնասվել։

◆ Իւրաքանչիւր տարի քաղաքային վարչութիւնը հանգուցեալ Միզուրեանի կտակած գումարի տոկոսները վիճակով յատկացնում է աղքատ օրիորդների մարդու տալուն։ Այս տարի այդ գումարի տոկոսիքը յատկացված է օր. օր. Ա. Փարսադանեանցին, Վ. Ներսէսեանցին, Շ. Պապովեանցին և Ս. Եարալեանցին։

◆ Կովկասի Փոխարքան ֆինանսների մինիստրի հետ համաձայնութիւն կապելով թոյլ տուեց 650 ր. տալ Երևանի սիւննիների նահանգական մէջլիսին իբրև նպաստ։

✦ Թիֆլիսի ոստիկանապետը կարգադրել է ոստիկանութեան անդամներին պարտաւորեցնել տնատէրերին ամեն օր մաքրել տալ իրանց տների մայթերը ձիւնից և ածել աւազ։

✦ Այսօր Կովկասեան կանանց ընկերութեան օգտին բժշկական ընկ. շէնութեան մէջ Կօզլօվսկին կը դասախօսէ աստղաբաշխութեան մասին։

✦ Թիֆլիսի քաղաքային վարչութեան գլխաւոր հաշուապահի պաշտօնը ժամանակաւորապէս յանձնվեց վարչութեան քարտուղար Դանդուրեանին. գլխաւոր հաշուապահ Եարամիշեանը ներկայումս արձակուրդով գտնվում է Մոսկվայում, ուր մեկնել է բժշկվելու համար։

✦ Նահանգապետից հաստատված և քաղաքային դումայի կազմած մսի և հացի սակագինը հետևեալն է. փռերում թխվող 3-րդ տեսակի հացի ֆունտը $2\frac{1}{2}$ կ., հաճարի ալիւրից նոյնպէս $2\frac{1}{2}$ կ., թոնիրներում թխված հացի 3-րդ տեսակի ֆունտը 3 կ., լաւաշի 1-ին տեսակը՝ $4\frac{1}{2}$ կ., 2-րդ տեսակի ֆունտը 4 կ.։ Տաւարի մսի ֆունտը՝ 13 կ., ոչխարինը՝ 14 կ., խոզինը առանց կաշուի 15 կ., կաշուով 14 կ.։

✦ Փետրվարի 9-ին Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնակատար Ալ. Խատիսեան և ձայնաւոր Քանանեան այցելեցին Վրաստանի էկզարխին և խնդրեցին թոյլ տալ Վերայի հին ոչնչացված գերեզմանատան տեղում շինել հասարակական պարտէզ և երեխաների համար խաղատեղի։ Էկզարխն այս միջնորդութեանը վերաբերվեց մեծ համակրանքով։

✦ Վլադիկավկազի երկաթուղիների ծառայողներն անցեալ 1908 թ. համար պարգևներ ստացան 196 հազար րուբլի։

✦ Թիֆլիսի էլեքտրաքարշի վարչութիւնը խնդրամատոյց էր եղել քաղ. վարչութեանը առ այժմ դատ չը բանալ ընկերութեան դէմ նստափոխ տոմսակների վերաբերութեամբ, մինչև որ ընկերութեան և քաղ. վարչութեան իւրիսկօնսուլտները չը խորհրդակցեն միասին։ Մինչև այս վիճելի հարցի լուծումը, վերացված է նաև էլեքտրաքարշի վարչութեան կարգադրութիւնը, որի համաձայն նստափոխ տոմսակներն իրանց ոյժը պահելու էին միմիայն 3 ժամ։

✦ Քաղաքային դումայական ֆինանսական մասնաժողովը վերջացրեց 1910 թ. քաղաքի յատուկ դրամագլուխների նախահաշուի քննութիւնը և տուեց իր եզրակացութիւնը՝ թէ այդ գումարներն աւելի լաւ է վերածել օբլիգացիաների քաղ. 4-րդ փոխառութեան մէջ՝ փոխանակ նրանց պահելու ընթացիկ հաշուով։

✦ Գանձակի բանտում փետր. 9-ին տեղի է ունեցել մեծ ծեծ ու ջարդ։ Վիրաւորված են 3 հոգի։ Հանգստութիւնը վերականգնված է։ Քննութիւն է կատարվում։

✦ Գանձակի նահանգապետ Կօվալէվը մեկնեց Գանձակ։

✦ Թոքախտի դէմ կռւող Կովկասեան Ընկերութիւնը՝ Աբասթումանում շինվելիք սանատօրիայի համար ստացել է նուէր.—Փոխադարձ վարկի ընկերութեան ծառայողներից 16 ր. 80 կ., տ. Տ. Ռշօյից 1 ր., Փոխադարձ վարկի երկրորդ ընկերութեան ծառայողներից 4 ր. 40 կ., մի անյայտից 5 րուբ.։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

—

✦ Բօրսային առևտրի և գիւղատնտեսութեան ներկայացուցիչների համաժողովը մի որոշում կայացրեց, որի մէջ շեշտվում էր տօն օրերի թւի կրճատման անհրաժեշտութիւնը։ Նոյնանման մի որոշում կայացրեց արդիւնաբերութեան և առևտրի համաժողովների խորհուրդը։ Սակայն տօների թւի կրճատման հարցը վերջերս անսպասելի ընթացք ստացաւ։ Պետական Խորհրդի առանձին յանձնաժողովի մէջ արդէն քննըված և աւարտված օրինագիծը պէտք է ներկայացվէր ընդհանուր ժողովին դեռ անցեալ տարվայ դեկտեմբերին։ Ներքին գործերի մինիստրութեան ներկայացուցչի կտրական բողոքի պատճառով օրինագծի դէմ, վերջինս ժամանակաւորապէս հերթից հանվեց։ Նախագծի դէմ միաժամանակ բողոք սկսվեց և Պետական Խորհրդի աջակողմեան շրջաններում։ Այդ ագիտացիան, որպէս հաղորդում են, աջողութեամբ պսակվեց. մտադրութիւն կայ հերթական չը դարձնել նախագիծը ներկայ նստաշրջանի ընթացքում։

✦ Հաղորդակցութեան ճանապարհների մինիստրութիւնը շրջաբերական կարգադրութիւն հրատարակեց, որ 10,000 րուբլուց բարձր երկաթուղային պատուէրները կատարվելու են միայն մինիստրութեան թոյլտուութեամբ։ («Р. В.»)

✦ Ֆինանսների մինիստրութեան մէջ սկսվեց նոր հարկեր մտցնելու վերաբերեալ նիւթերի նախնական մշակումը։ Հարկ է դրվելու գազի վրա, որպէս լուսաւորող նիւթի վրա, և թղթի մի քանի տեսակների վրա։ Մինիստրութիւնը մտադրութիւն ունի պնդել, որ ներկայ նստաշրջանում քննըվեն օրինագծեր անշարժ կալուածքների գրաւականով տրվող դրամագլուխների վրա։ («Р. В.»)

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Տիգ. Նալբանդեանի կօնցերտը Ժընեվում

Ժընեվ, 14 փետր. (ն. տ.)

Փետր. 9-ին (ն. տ.) տենոր Տիգրան Նալբանդեանը մի կօնցերտ տուեց տեղւս կօնսերվատօրիայի դահլիճում։ Այդ կօնցերտին մասնակցում էին Ժընեվի հասարակութեանը յայտնի՝ օպերային երգչուհի M-me Pratz-Barat Բրիւսէլի «La Monnaie» թատրոնից և Ժընեվի դաշնակահարուհիներից մէկը՝ M-elle Chossat. Կօնցերտը գրաւել էր մեծ բազմութիւն և պսակվեց աջողութեամբ։

Տիգրան Նալբանդեանն ունի գեղեցիկ ձայն ճոխ թէմբրով, ինչպէս և հմտութիւն և ձիրք՝ գործադրելու իր ձայնը մաքուր արտայայտութեամբ և տեմպերամենտով։

Ծրագրի մէջ աչքի էին ընկնում Ստրադելլայի յայտնի եկեղեցական երգը և Դօնիցետտիի «L'elisire d'Amore»-ից մի հատուած, որոնք երգվեցին իտալերէն, նոյնպէս և Չայկօվսկիի, Կիւի ռոմանսները, որոնք այնքան համապատասխան են երգչի ձայնի և տեմպերամենտի բնաւորութեանը։ Հայերէն նա երգեց Սպենդիարօվի «Այ վարդ» ռոմանսը և ժողովրդի ցանկութեամբ «Կռունկը»։

Տեղական մամուլը միաձայն գովում է երգչին՝ գնահատելով նրա երաժշտագիտական ձիրքն ու տաղանդը։

«Journal de Genève»-ն այդ կօնցերտի առիթով գրում է. «Նալբանդեանը ցոյց տուեց իրան, ինչպէս և առաջ, որպէս փայլուն երգիչ, մասնաւորապէս կատարելագործված կիսատոներում և քնքուշ էֆեկտներում, բայց դժբաղդաբար չը դուրս գալով այդ շրջանակից, որի տեղականութիւնը դարձնում է փոքր ինչ միատեսակ երգեցողութիւնը»։

«Genève Mondain»-ը, որը կետեղել էր Նալբանդեանի լուսանկարը, ի միջի այլոց հետևեալն է գրում. «Տենոր Նալբանդեանն ունի եթէ ոչ ուժեղ, բայց շատ հաճելի թէմբրով ձայն»։

«Tribune de Genève»-ը գրում է. «Նա տիրապետում է, ինչպէս և առաջ, շատ գեղեցիկ ձայնի, գալարուն և արտայայտիչ թէմբրով, որը նա գործ է ածում մեծ հմտութեամբ»։

Նոյն կարծիքն են յայտնում տեղւս միւս թերթերը, ինչպէս «La Suisse», «A. B. C.», «La Semaine à Genève» և այլն։

Տիգրան Նալբանդեանը, աջողութեամբ աւարտելով Պետերբուրգի կօնսերվատօրիան, չը շտապեց իսկոյն և եթ մտնել և բեմական ասպարէզը, բարւոք համարելով դեռ կատարելագործվելու մի քանի տարիներ Միլանում։ Լօզանում եւ մի երեկոյթ տալուց յետոյ, Նալբանդեանը մեկնելու է դէպի Միլան, այս անգամ վերջացնելու իր օպերային ռեպերտուարը՝ բեմ ելնելու համար։

Camalian

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ՃԱՀԻՃԸ ՄԱՔՐՈՒՄ ԵՆ

—

Թէ աստղերի տակ ինչեր է կատարվում, իրօք որ զարմանալի է։ Թիֆլիսի Վանքի մայր եկեղեցու Ղ. ա.-ք. Խարազեանի մահվամբ բացվում է քահանայական տեղ յիշեալ եկեղեցում։

Նոյն եկեղեցու երկու շատանի սարկաւագներ իւրայինների միջոցով ամեն կերպ աշխատում են քահանայանալ, ամեն մէկը աշխատելով տապալել միւսի թեկնածութիւնը։

Հոգևոր բարձրագոյն իշխանութիւնը յարմար է գտնում երկուսին էլ քահանայանել՝ բաժանելով յիշեալ ծուխը երկուսի մէջ։

Երկու երիտասարդ հոգևորականներ, որոնք ամեն կերպ աշխատում էին իրար տապալել, քահանայութիւնից յետոյ հաշտվում են, խօսք տալով իրար՝ գործել միասին, ապրել միասին, շնչել միասին։

Եւ իրօք. իրականութիւնը ցոյց է տալիս մեզ, որ երկուսն էլ համերաշխ գործում են, յօգուտ իրանց հօտի։

Խուցեան և Ալիխանեան քահանաների աշխատութեամբ Վանքի գաւթում բացվում է ծխական դպրոց, ուր իրանք ձրի յանձն են առնում ուսուցչութիւն անել։ Որ յիշեալ դպրոցի բացվելը պարտական ենք յիշեալ քահանաներին՝ դա փաստ է, իսկ որ նոյն եկեղեցու մնացեալ քահանաները անկարող են եղել այդ անել, դա իրօք որ ցաւալի է։ Ցաւալի է մանաւանդ այն, որ յիշեալ եկեղեցու քահանաներից երկուսը յայտնի քահանաներ են համարվում և մինչև օրս անկարող են եղել այդ անել։

Բայց, որ այսօր չորսը միասին բռնվում են մի տխուր, ամօթալի գործի մէջ դարձեալ շնորհիւ Խուցեան և Ալիխանեան քահանաների—ինչ անուն տանք սրան։

Յայտնի եկեղեցու 4 քահանաներ, իրանց խոշոր ծառայութիւնների համար վարձատրված քահանայական բոլոր պատիւներով, բռնվում են պղծումների մէջ։

Մամուլը արձանագրեց փաստը, երիտասարդ քահանաները հաստատեցին մամուլի լուրը, իսկ մեղադրվող քահանաները լռեցին, դատի չենթարկեցին մեղադրողներին, չը հերքեցին լուրը բոլորը միասին, այլ յիշեալ խմբից միայն Երզնկեան քահանան իր «Հովիւում» կցկտուր մի երկու լուրով ուզեց փարատել յիշեալ մեղադրանքը։

Սակայն փաստը մնաց փաստ, որ «Թիֆլիսի Վանքի մայր եկեղեցում կատարվել է պղծում 4 միաբան քահանաների ձեռքով»։

Դա մեծ պատիւ է առ հասարակ հայ քահանայութեան, մանաւանդ Թիֆլիսի քահանայութեան, որ լուռ հանդիսատես եղաւ իրան կարգակից եղբայրների խայտառակութեան։

Բաւական չէ լռել, պէտք է պահանջել ամենախիստ քննութիւն, որպէսզի մեղաւորները կրեն իրանց իսկական ամենախիստ պատիժը իբրև օրինակ միւսների։

Մենք մի համեստ քահանայ, հեռու հիւսիսից պահանջում ենք ամենախիստ քննութիւն, որպէսզի մասամբ գէթ դրանով վերականգնվի հայ քահանայութեան ընկած պատիւը։

Իսկ Խուցեան և Ալիխանեան քահանաների նման կարող քահանաների պարտականութիւնն է շարունակել աչալուրջ լինել, մինչև որ հոգևոր բարձրագոյն իշխանութիւնը կարիք զգայ բոլոր թեմերում նշանակել տալ քննիչներ, քննելու թեմի բոլոր հաշիւները՝ երևան հանելով պղծումները, յափշտակութիւնները, գողութիւնները։

Ստաւրոպոլ Ս. ք. Տէր-Յովհաննիսեան

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆ. ՄԻՈՒԹԵԱՆ ԱՅՍՊԷՍ ԿՈՉՎԱԾ VII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ*)

—

Յօդուածի նեղ սահմանները մեզ թոյլ չեն տալիս մի առ մի յիշատակել այն մի շարք անհեթեթութիւնները, որոնք ժողովի մեծամասնութեան կողմից հանդէս են գալիս որպէս պատասխան փոքրամասնութեան արած մի շարք ծանրակշիռ առարկութիւնների և որոնք կողմնակի ու բանի էութիւնից անտեղեակ ունկնդիրներին միայն ապշեցնել կարող են։ Սակայն խնդրին քիչ թէ շատ ծանօթ մէկի, ներկայ դէպքում՝ ժողովի փոքրամասնութեան, համար, որն արդէն թափանցել էր մեծամասնութեան ներքին աշխարհը և նրա որոշ մտադրութիւնը կռահել, այդ անհեթեթութիւնները շատ բան ասող, շատ բան պարզող էին։ Երբ մէկն իրան չգիտութեան է տալիս, այդ նշանակում է, որ նա մի ինտերէս ունի դրա մէջ, մի նպատակ ունի առաջ տանելու։ Այս դէպքում փոքրամասնութեան դերը ժողովում աւելի պատասխանատու է դառնում.—քրքրել խղճմտօրէն խառնիճաղանճ գործերը, երևան հանել իրողութիւնը, հանդէս բերել օրինաւորութիւնն ու արդարութիւնը և ըստ այնմ գնահատել համագումարը ու ցոյց տալ նրան իր վերաբերմունքը։

Այսքանը համագումարի առաջին նախապատրաստական ժողովի արդիւնքն է։

Յաջորդ երեք նախապատրաստական նիստերը զբաղվում են պատգամաւորների մանդատների քննութեամբ։ Այդ թղթերը, որոնցից մի քանիսը ինչ-ինչ պատճառներով այդ նիստերի ժամանակ ամենևին երևան չեկան, մի քանիսը հէնց ժողովում այդ հարցը յարուցվելուց յետոյ գրվեցին, իսկ մէկը մի ուշացած հեռագիր էր երկու խօսքից բաղկացած և «երեք տասնեակ» ստորագրութեամբ, այսինքն՝ 30 ընտրողներից**), միայն այսպիսի համագումարը կարող էր մանդատ համարել. այդ թղթի կտորներից ժողովը միայն մի բան կարող էր իմանալ, որ այս-ինչը պատգամաւոր է. իսկ թէ նա ինչու համար է ընտրված, ում կողմից, քանի ընտրողներից, որ միութեան կամ պատահական համախմբումի կողմից և, որ գլխաւորն է, ինչ մանդատ ունի, ինչ են ցանկանում ընտրողները համագումարի օրակարգը կազմող խնդիրների նկատմամբ,—այդ մասին թղթերը ըստ մեծի մասին ոչինչ չէին պարունակում։ Այս երևոյթը որքան որ ցաւալի է գործին մասնակից ուսանողութեան նկատմամբ, նոյնքան էլ ապացոյց է այն իրողութեան, որ ամեն ինչ եղել է շտապով, անուշադիր, վայր ի վերոյ և միտումնաւոր, միայն թէ համագումարը կազմվի և այս գործը ձեռնարկողներն իրագործեն իրանց նպատակը, փոյթ չէ թէ ներելի ու աններելի միջոցներով, ծուռ, գողի ճանապարհով։

Այսու հանդերձ այդ «մանդատները» (ստիպված ենք դարձեալ չակերտների դիմել) այդ իսկ բովանդակութեամբ առիթ տուին երևան հանելու մի շարք այլ նորութիւններ, որոնք բաց են անում փոքրամասնութեան առաջ քաշված վարագոյրը և ցոյց տալիս, թէ ինչ գիտումով է կազմված այս համագումարը, ինչ ձևով ու միջոցներով և թէ ինչեր են կատարված եղել վարագոյրի ետևում որոշ խմբակի ձեռքով՝ որպէսզի ղեկավարները «ընտրվեն», ու համագումար եկել են նախօրօք կազմած ծրագրով ու մշակած գործելակերպով առաջ տանելու համագումարի նիստերը, թև ու թիկունք ունենալով առաջուց յայտնի պատգամաւորների մեծամասնութեանը և գծած ուղով էլ հանելու իրանց կէտ-նպատակին։

«Մանդատներից» ու նրանց շուրջը ծագած վիճաբանութիւններից, որոնք տևեցին ամբողջ երեք նիստ, այլ և տրված՝ զանազան բացատրութիւններից փոքրամասնութիւնը քաղեց հետևեալ նորութիւնները։

Նախ երևաց, որ մի քանի քաղաքներից եկել են աւելի, անգամ կրկնակի թւով պատգամաւորներ, քան այդ թոյլ էր տալիս նրանց ընտրողների քանակը ըստ միութեան կանոնադրութեան։ Այսպէս օրինակ՝ Պարիզի 40 ուսանողութիւնը, որ 4 պատգամաւոր պէտք է ուղարկէր*), ուղարկել է մի հոգու 7 պատգամաւորի ձայնով, որպէսզի վերջինս էլ մնացած 6 ձայները բաշխէ ժողովի անդամներից նրանց, որոնց ինքը կը ցանկանայ։ Եւ այդպէս էլ եղաւ։ Ժընևը, որ 3 պատգամաւոր պիտի ուղարկէր կամ առ առաւելն 4, ուղարկել էր 6 պատգամաւոր։ Հալլէի 7 ուսանողներն ուղարկել են 2 պատգամաւոր։ Լօզանում՝ նոյն երևոյթը։ Ուրեմն մի հոգի երկու անգամ է ընտրել, կատարվել է կրկնակի ընտրութիւն, որովհետև նա թէ ուսանող է և թէ մի խմբակի անդամ, իսկ մի քանի դէպքերում նա թէ ուսանող է և թէ ուսանող, այսինքն՝ երկու տեսակի ուսանող…

Երկրորդ՝ պարզվեց, որ ուսանողական միութիւններ են համարվել այն ուսանողները, որոնք չունեն որևէ կազմակերպութիւն, չունեն մի նպատակ, այդ նպատակն իրագործելու համար կանոնադրութիւն և վարիչ մարմին, այլ պատահաբար հաւաքվել են պատգամաւոր ընտրելու համար (օր.՝ Ցիւրիխի և Հալլէի ուսանողները)։ Եւ երբ ժողովում հարց է լինում չընդունել այդպիսիներին միութիւններ, մեծամասնութեան ղեկավարներից մէկը առաջարկում է, ընդհակառակը, համարել նրանց միութիւններ, քանի որ երբ ինքը մի անգամ պատիւ է ունեցել նրանց համար մի դասախօսութիւն կարդալու, նրանք բոլորն էլ հաւաքվել են ու հաճութեամբ լսել դասախօսութիւնը։

Մի երկրորդն էլ հաստատում է առաջինի առաջարկը, աւելացնելով որ Ցիւրիխի ուսանողութիւնը ունի մի ընթերցարան՝ մնացած՝ տարիներ առաջ գոյութիւն ունեցող և այժմ չքացած ուսանողական միութիւնների, ուր ուսանողները յաճախում են թերթ կարդալու։ Եւ ժողովը նրանց համարում ու ընդունում է որպէս միութիւններ…

Ինչու.—բանը նրանումն է, որ թէև Ցիւրիխում 16 հայ ուսանող կայ, սակայն ընտրութիւններին մասնակցել են 11 հոգի և փոխանակ ըստ օրինի մէկ պատգամաւոր ուղարկելու, երկուսն են ուղարկել։ Արդ, որպէսզի պատգամաւորներից մէկը ապօրինի չը համարվի, Ցիւրիխի 16 ուսանողները յայտարարվում են որպէս մի ուսանողական միութիւն, իսկ պատգամաւորները՝ այդ միութեան ներկայացուցիչներ։ Ահա թէ որտեղ է թաղված շունը։

Երրորդ՝ յայտնվեց, որ մի քանի տեղերում պատգամաւորական ընտրութիւնների ժամանակ ներկաները ձայն են տուել նաև բացակաների փոխարէն և ուրեմն եղել են ընտրողներ, որոնք երեք անգամ են ընտրել, եթէ աչքի առաջ ունենանք կրկնակի ընտրութիւնները։

Ժողովն այս էլ ընդունում է օրինաւոր և միանգամայն հարազատ ընտրողական սիստեմի դեմօկրատիկ ոգուն…

Եւ վերջապէս չորրորդ՝ նկատվեց, որ համագումարը կազմող երկու պարոնները, կոյր գործիք դառնալով ժողովի մեծամասնութեան և համախոհների ձեռքին, աջ ու ձախ շահագործել են միութեան լիազօր կօմիտէի անունը՝ վերջինիս ուղղված զանազան պաշտօնական գրութիւններին նրա կողմից այս և այն որոշումները տալով և «լիազօր կօմիտէ» ստորագրութիւնը դնելով պատասխան նամակների տակ։ Մինչդեռ, պարոններից մէկի ասելով, միութեան կնիքն ստացել են (միւսի ասելով՝ վերցրել են) միայն և միայն համագումարը կազմելու տեխնիկական աշխատանքների համար, այսինքն կնքել շրջաբերականները և աւելի ոչինչ։

Այս մէկը կարողացաւ վերջապէս մեծամասնութեան դառնութեան, խղճի և ամօթի զգացմունքի աննշան հետքերը երևան հանել. այստեղ նրանք հարկադրվեցին հետաքրքրվել այդ կէտերով, քննել եղելութիւնը և դատել պարոններին։ Սրանցից մէկն այնքան ճարպիկ գտնվեց, որ, առանց խղճի խայթի, ամբողջ յանցանքը բարդեց իր ընկերոջ վրա, լուաց ձեռքերը Պիղատոսի նման և անարատ դուրս եկաւ մեծամասնութեան առաջ։

Միւսը ենթարկվեց դատի. դատաւորները՝ դատապարտեալին իրանց ձեռքում գործիք դարձնողները դատում են յանցաւորին այն մեղքի համար, որ նա իր սոնց ձեռքին գործիք է եղել։ Եւ այս չը տեսնըված ու չը լսված իրողութիւնը կատարվեց Եւրոպայի հայ ուսանողների համագումարում…։

Խեղճ դատապարտեալը հարկադրվեց վերջապէս պոռթկալու և յայտարարելու, որ այդ բոլորը կատարված է յանուն կուսակցութեան, յանուն նրա շահերի. կարճ ու պերճախօս, կարճ ու նշանակալից. այս ամբողջ պատմութիւնը ամփոփվում է հէնց այդ երկու խօսքի մէջ։

Ժընեվի Հայ Ուս. Միութեան պատգամաւորներից մէկը՝

Աշոտ Չիլինկիրեան

(Վերջը միւս անգամ)

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թաւրիզ, 4 փետրվարի

Թեմակալ Կարապետ եպիսկոպոսի և քարգուզարի պաշտօնակատար Նասր-ուլ-Վզարէի միջև խզված յարաբերութեանց մասին գրել եմ նախընթաց թղթակցութիւններումս։ Առաջնորդը քարգուզարիայի ձեռք առած անպատշաճ ուղղութեան համար գրաւոր բողոք էր ներկայացրել նահանգապետ Մուխբիր-ուս-Սալթանէին։ Վերջինս՝ նկատողութեան առնելով երկու կողմերի արժանապատւութիւնը՝ որոշել է երկուստեք գրված պաշտօնագրերը չեղեալ համարել. և այս կերպով ես գրել է իր պատասխան նամակի մէջ՝ թեմ. առաջնորդին. «Իմ միակ տենչն է, որ բոլոր պաշտօնեաները լաւ յարաբերութիւն և համերաշխ գործակցութիւն ունենան միմեանց հետ»։ Եւ, որ զարմանալին է, խորհուրդ է տալիս առաջնորդին, որ այսուհետև որևէ գործի վերաբերութեամբ աշխատի թեմակալը քարգուզարի հետ բարեկամաբար կարգադրել, միաժամանակ գործը յանձնելով իր կողմից խելահաս մի անձնաւորութեան, քարգուզարիայի հետ à l'amiable բանակցութիւններ կատարելու համար։ Հարցն ինքն ըստ ինքեան շատ պարզ է դրված գեներալ-նահանգապետի կողմից, այն է՝ որ առաջնորդարանը դադարի պաշտօնական յարաբերութիւն ունենալուց քարգուզարների հետ և որչափ կարելի է՝ բարեկամաբար կարգադրել այս գործն ու պահանջողութիւնը։ Տարիների ընթացքում քարգուզարների երգած հին երգն այս անգամ նահանգապետն է կրկնում, միայն մեղմ, քնքոյշ և մեղրաշուրթ լեզուով։ Պարսկահայերիս համար այս խնդիրը ծանրակշիռ նշանակութիւն է ստացել այսօր։ Թէ նորընտիր ժամանակաւոր թեմական խորհուրդն ու թեմակալը բացորոշ փաստի առաջ ինչ տակտիկայի են հետևելու, դեռ յայտնի չէ, այդ կը տեսնենք յետագայում և կարձանագրենք իր ժամանակին։ Մեր կարծիքով, ժամանակն հասել է արդէն, որ բովանդակ պարսկահայերի համար աւագ կարևորութիւն ունեցող այս խնդիրը հանվի Թէհրանի մէջլիսի առաջ և ձեռք բերվի նպաստաւոր լուծումն։

Թեմական խորհրդի սեղանի վրա կայ նաև մի այլ այժմէութիւն ունեցող հարց. դա միանդաբցի բռնի մահմեդականացված 12 տարեկան հայ պատանու հարցն է։ Գրել էի, որ տղան գտնվում է Թաւրիզում և վերջին անգամ Կարապետ եպիսկ. գրել էր նահանգապետին և պահանջել նրան։ Մի քանի օր ձգձգելուց յետոյ Մուխբիր-ուս-Սալթանէն պատասխանում է առաջնորդին, որ ինքն անձամբ հրաւիրել է տղին իր մօտ, մանրամասնին քննութիւն կատարել։ Նահանգապետի ասելով, տղի վրա ոչ մի բռնութիւն չէ կատարվել և նա մահմեդականութիւն է ընդունել իր սեփական համոզումով ու կամքով։ Հիանալի չէ՞։ Նահանգապետը Հաշդարուտի կառաւորին գրել և հրամայել էր. «Եթէ 18 տարեկանից պակաս հասակ ունի, յանձնել անմիջապէս ծնողներին կամ ուղարկել Թաւրիզ»։ Թեմական խորհրդի հետ համաձայնութեամբ առաջնորդը գրեց մի երկրորդ նամակ նահանգապետին, որ թեմ. խորհրդի անդամների ներկայութեանը հրաւիրվի տղան ու կատարվի քննութիւն։ Թէ ինչ կը լինի հետևանքը, կը տեղեկագրեմ իր հերթին։

Հայերիս համար շատ էլ հետաքրքրական չէ, թէ մի հայ մահմեդականութիւն է ընդունում, կամ մահմեդականներ հայ դաւանութիւն են ընդունում թէկուզ. ցաւալին այն է, որ բացարձակ բռնութիւն է գործ դրվում անգամ շարիաթի օրէնքով անթոյլատրելի հասակ ունեցող պատանու վրա և վնասում ազգի և իշխանութեան վարկին. և այդ տգեղ ակտը այնպիսի մի մօմէնտում, երբ անկեղծ ոգով ու համամարդկային զգացումներով խանդավառված հայ հերոսներն իրանց արիւնն են թափում Պարսկաստանի բարգաւաճութեան և բարեկարգութեան համար։

Թաւրիզի անջումանի համար մի հայ անդամի քուէարկութեան նկատմամբ գրել էի նախորդներում «Մշակին», որ քուէների նուազ քանակութիւնն ի նկատի ունենալով՝ Թէհրանից հրահանգի էր սպասվում։ Մէջլիսը հեռագրով արտօնեց այստեղի անջումանին բաց անելու քուէտուփը։ Անջումանը յայտնել էր առաջնորդարանին և պահանջել 2 անձ քուէհամարին ներկայ գտնվելու համար։ Առաջնորդարանի կողմից ներկայացան թեմ. խորհրդի անդամներ Ստեփան Եղիազարեան և Նիկողայոս Տէր-Յովհաննիսեան։ 88 քուէ ստացել է Գասպար Յակոբեան, 19 քուէ Ն. Տէր-Յովհաննիսեան։ Անջումանը մի գրութեամբ քուէների արդիւնքը առաջնորդարանին յայտնելուց յետոյ՝ առաջարկել է. «Եթէ Գ. Յակոբեանը համապատասխանում է ցենզով թէ այլ հանգամանքներով օրէնքի գծած տրամադրութիւններին, ուղարկեցէք, որ մասնակցի անջումանի նիստերին իբրև հայ անդամ»։ Թէ ինչ կը պատասխանէ թեմ. խորհուրդը, այդ մեզ յայտնի չէ արդէն։ Հայկազուն

ՑՈՅՑ ՅՕԳՈՒՏ ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԻ ՊՐՈՒՍԻԱՅՈՒՄ

—

Սօց.-դեմօկրատական կուսակցութեան նախաձեռնութեամբ կիրակի, յունվ. 30-ին

---

*) Տես «Մշակ» № 30.

**) Այդ հեռագիրն ստացվելուց մի քանի օր յետոյ ստուգվեց, որ «երեք տասնեակը» 11 ընտրող է եղել իրօք։ Ա. Չ.

*) Միութեան կանոնադրութեան համաձայն՝ իւրաքանչիւր 10 ուսանող 1 պատգամաւոր է ընտրում։ Իսկ ժողովն ընդունեց որ 15 ուսանող կարող են 2 պատգամաւոր ընտրել։ Ա. Չ.

Բեռլինում և Պրուսիայի զանազան գաւառական կենտրոններում բազմաթիւ ժողովրդական ժողովներ սարքվեցին բողոք յայտնելու համար կանցլեր Բէտման Գոլվէգի առաջարկած ընտրողական ռէֆորմի օրինագծի դէմ: Կարծելով որ ցոյցերը կարող են և փողոցներում տեղի ունենալ, կառավարութիւնը արտակարգ միջոցներ ձեռք առաւ կարգը պահպանելու համար: Կիրակի առաւօտեան Բեռլինի փողոցների պատերի վրա երևաց Բեռլինի քաղաքապետի «նախազգուշութիւնը», որ շատ լակոնական ոճով էր կազմված և ասում էր հետևեալը. «Լսվում են ձայներ «իրաւունքները փողոցի վրա»: Փողոցը գոյութիւն ունի միայն երթևեկութեան համար: Պետական իշխանութիւններին դիմադրելու դէպքում գործ կը դրվի զէնք: Ես զգուշացնում եմ հետաքրքրվողներին»: Միևնոյն ժամանակ Բեռլինի գարնիզոնի զօրքերը հրաման ընդունեցին կիրակի օրը չը հեռանալ զօրանոցներից: Ցիրաւի ցոյցերը փոխադրվեցին փողոցները, բայց, բարեբաղդաբար, ցուցարարների և ոստիկանութեան մէջն տեղի ունեցան ընդհարումներ միայն մի քանի տեղերում, որոնք համեմատաբար լուրջ բնաւորութիւն չէին կրում: Բեռլինի 18 ամենամեծ դահլիճներում կէսօրին սկսվեցին ժողովներ, ուր խօսում էին սոց.-դեմոկրատական կուսակցութեան հռետորներ: Դահլիճներն այն աստիճան լիքն էին, որ մի քանիսում դռներից առաջ արգելված էր մուտքը: Մօտ 1 ժամին ժողովները վերջացան և ամեն տեղ միևնոյն որոշումը կայացաւ, որի մէջ շատ կծու լեզուով զայրոյթ է յայտնվում նոր ընտրողական օրինագծի դէմ: Դրանից յետոյ ժողովներին մասնակցողները շարժվեցին դէպի Բեռլինի կենտրոնական փողոցները: Սոց.-դեմոկրատական կազմակերպութիւնների անդամները պահպանում էին կարգը, իսկ ոստիկանութիւնը ևս իր կողմից շատ կոռեկտ կերպով կատարում էր իր պարտականութիւնները: Փողոցային ցոյցերի բոլոր մասնակցողների թիւը, «Berl. Tag.» լրագրի խօսքով, հասնում էր 100,000 հոգու: Մի քանի հրապարակների վրա յանպատրաստից ժողովներ տեղի ունեցան բաց երկնքի տակ: Օրինակ, Վինտերֆելդ-պլացի վրա, ուր հաւաքվել էին մօտ 4000 մարդ, ռէյխստագի անդամ ս.-դ. Ֆիշեր ճառ արտասանեց, բարձրանալով լապտերի սիւնի վրա: Նոյնպիսի մի ժողով տեղի ունեցաւ Հումբոլդգայնի հրապարակի վրա, ուր կարմիր դրօշակի շուրջը, որի վրա գրված էին «ազատութիւն, հաւասարութիւն, եղբայրութիւն» խօսքերը, հաւաքվեց ժողովրդի ահագին բազմութիւն, ոմանց ասելով 20,000, իսկ ուրիշների ասելով 50,000: Այստեղ իսկոյն սարքեցին մի ամբիոն, որից խօսեցին սոց.-դեմոկրատներ Լէտեբուր և Բորգման և դեմոկրատ Բրէյտշէյդ:

Ոստիկանութիւնը մանաւանդ խնամքով պաշտպանում էր այն փողոցները, որոնք սահմանակից էին կայսրի պալատին և այն շինութեանը, ուր ապրում էր կանցլեր Բէտման Գոլվէգ: Հէնց որ այդ փողոցներին մօտենում էին ցուցարարների խմբերը, բանուորական մարսէլիէզի երգեցողութեամբ և սովորական բացագանչութիւններով «Թող կորչի Բէտման Գոլվէգ», «Թող կորչի եռակարգ ընտրողական իրաւունքը», «Թող կորչեն յունկերները», «Կեցցէ ընդհանուր ընտրողական իրաւունքը» և այլն, նրանց դիմաւորում էին հետիոտ և հեծեալ ոստիկանութեան զօրեղ զօրամասերը, որոնք ստիպում էին ցուցարարներին գնալ դէպի հարևան փողոցները: Այդպիսով արքայական պալատի և մինիստրութեան շինութիւնների շուրջը կատարելապէս հանգստութիւն էր տիրում: Ոստիկանութիւնն այդ ժամանակ միայն շատ քիչ անգամ է զէնքի դիմել, և վիրաւորների թիւը խիստ աննշան էր:

Նոյն բնաւորութիւնն էին կրում և Պրուսիայի գաւառական քաղաքներում սարքված ցոյցերը: Այնտեղ ևս տեղի ունեցան ընդհարումներ ցուցարարների և ոստիկանների միջև, սակայն միայն Հալլէում և Դուիսբուրգում նրանք առանց արիւնահեղութեան չանցան: Հալլէում ոստիկանները վիրաւորեցին մօտ 40 մարդ, Դուիսբուրգում 3, որոնց մէջ գտնվում է տեղական սոց.-դեմոկրատական լրագրի խմբագիրը: Ադմինիստրացիան Հալլէում ու Դուիսբուրգում արդարանում է նրանով, որ ոստիկաններն ստիպված էին պաշտպանվել քարերի, ձեռնափայտերի և անձրևակալների դէմ, որ ցուցարարները գցում էին ոստիկանների վրա:

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

9 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Սենատը փոխեց Վարշավայի նահանգական ատեանի որոշումը «Պալէստին» ընկերութիւնը օրինականացնելու մասին այն հիման վրա, որ հրէական գաղթականական ընկերութեան կանոնադրութիւնից երևում է, որ ընկերութեան նպատակները միևնոյն են սիոնական կազմակերպութիւնների նպատակներին, որոնց գործունէութիւնը ուղղված է միացնելու հրէական մասսաները և թշնամութիւն է սերմանում տեղացի բնիկ ազգաբնակութեան հետ:

ՍՏՕԿՀՕԼՄ: Սրտի պայթումից վախճանվեց ռուսաց դեսպան Սերգէևը:

ԽԱՐԿՕՎ: Դուման 1000 րուբլի յատկացրեց Պարիզի հեղեղից վնասվածների օգտին: Քաղաքում ժողոված է այդ նպատակով 18 հազար ֆրանկ:

ՎԱՐՇԱՎԱ: Շոպէնի ծննդեան հարիւրամեակի օրը տեղի ունեցաւ պատարագ ս. Խաչ եկեղեցում: Ֆիլարմոնիայում՝ յոբելեանական համերգ:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ.
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԲԺՇԿԱՊԵՏ
ԱՐԵՏ. ԲԱԲԱՅԵԱՆԸ
Մնալով այս ձմեռ Թիֆլիսում, ընդունում է ներքին եւ ջղային հիւանդներ:
Ցերեկվայ 1—3 ժ., երեկոյեան 6—7 ժ.
Լերմոնտովսկայա փողոց տուն 21, բն. № 2.
Տելեֆօն № 221.
(օ. մ.) 1213. 35—29

ԲԺԻՇԿ
Խ. Բ. ՄԵԼԻՔ-ԷՅՆԱԹԵԱՆ
Մասնագէտ սիֆիլիս, վեներական, միզասեռական և կաշուի հիւանդութիւնների: Հիւանդների ընդունելութիւնը՝ առաւօտ. ժամը 9-ից մինչև 10-ը, երեկոյեան ժամը 5-ից մինչև 7-ը:
Կսէնիեվսկայա փ., № 6, «Վէտցէլ» հիւրանոցի մօտ: (ե. հ. շ.) 955. 100—57

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳԲԷԳԵԱՆ
Աչքի հիւանդութիւններ
Ընդունելութիւնը ամեն օր
Առաւօտեան ժամը 10—1
Երեկոյեան ժամը 5—7
Վելիամինովսկայա փող № 8
(օ. մ.) 783. 100—81

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԵՐԵԽԱՅՈՑ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
առանձնապէս ՍՏԱՄՈՔՍԻ և ԱՂԻՔՆԵՐԻ հիւանդութիւններ:
Ընդունելութիւն ամեն օր { 5—7 ժ. երեկ.
Միքայէլեան փող., № 36. Տելէֆօն № 388
(օ. մ.) 1216. 100—69

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹՈՒՆԵԱՆ
Ներքին և ջղային հիւանդութիւններ:
Ընդունելութիւնը
ամեն օր { առաւօտեան 9—12 ժ.
երեկոյեան 5—7 ժ.
Միքայէլեան փողոց, № 27.
(ա. օ.) 1087. 100—75

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
Սիֆիլիս, միզասեռական, վեներական և կաշուի հիւանդութիւններ:
Ընդունելութիւնը
ամեն օր (առաւօտեան ժ. 12½—2.
(երեկոյեան ժ. 5—7.
Կիրակի օրերը միայն առ. ժ. 11—12½.
Հասցէն՝ Սօլօլակ, Բէհբութեան փ., № 33.
(օ. մ.) 1044. 100—76

ՄԵԴԻՑԻՆԱՅԻ
ՖԵԼԴՇԵՐ-ՄԱՍՍԱԺԻՍՏ
Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ
Բժիշկների որոշմամբ կատարում է կաշուի տակ սրսկումներ, լուացումներ (спринцов.), վէրքի փաթաթումն, դեղերի քսումն (втиранiе) և այլն: Էլեկտրականութիւն ռէվմատիզմի, պարալիչի, սեռական անկարողութեան և թուլութեան դէմ: Մասսաժ էլեկտրական գործիքով և ձեռքով. մասնաւոր և ընդհանուր մասսաժ: Բժշկական մարմնամարզութիւն, ծաղկահատութիւն: Օտարերկրեայ հիւանդներին ցոյց է տալիս մասնագէտ հմուտ բժիշկների: Խորհուրդը 50 կոպ.: Ընդունելութիւնը՝ կանանց—3—3½ ժ., տղամարդանց—3½—4½ ժ.: Семеновская ул., № 9.
(կ. հ.) 77. 50—7

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

!ՍՈՎՈՐԵՑԷՔ!
այլազգի լեզուներ առանց ուսուցչի
Դուք կարելիութիւն ունէք 2 ամսվայ ընթացքում սովորելու, առանց կողմնակի օգնութեան, լաւ գրել, կարդալ և ուղիղ խօսել գերմաներէն, ֆրանսերէն, անգլիերէն կամ լատիներէն՝ այլազգի լեզուների համար կազմված և լրացումներով նորերս հրատարակված իմ գրքի մեթօդով: Գրքի գինը՝ 1 լեզուի համար—1 ր., 2 լեզուինը միասին՝ 1 ր. 75 կ., 3 լեզ.՝ 2 ր. 50 կ.: Բոլոր 4 լեզուներինը՝ 3 ր. 25 կ.: Արժէքը կարելի է ուղարկել և մարկաներով: Վերադիր վճ. ուղարկվելուց՝ 15 կ. թանկ իւրաքանչ. գրքի համար: Կանխաւ արժէքն ուղարկողները ճանապարհած. չեն վճարում: Հազարաւոր շնորհակալ. են ստացված մեր հայրենիքի բոլոր ծայրերից! Պահանջները խնդրում եմ հասցէագրել. г. Лодзь, преподавателю языковъ Бернштейну. И.
Թղթակցութիւնները ռուսերէն:
(11,16) (В. 10684) 140. 2—1

ԱՆՀԱՒԱՏԱԼԻ Է, ՍԱԿԱՅՆ ՓԱՍՏ Է
7 ր. 25 կոպէկով 2 զգեստացու. ուղարկում եմ փաթեթած և ճանապարհածախսով միասին, պօստով, վերադիր վճ. 4¼ արշ. երկար., տղամարդ. հագուստի համար, ԱՆԳԼԻԱԿԱՆ ԲՐԴԷ ՏՐԻԿՕ, 2 արշ. լայն., նորագոյն ամուր գործուածք, հարթ կամ նոր-մօդային նկարներով՝ բոլոր մութ գոյների, և 8 արշ. «Նօվէտէ» կտոր, կանանց զգեստացու, մօդային վանդականման նկարներով կամ չերտաւոր:
Երկու զոյգ կտոր պատուիրելուց՝ ձրի կցում եմ թէ տղամարդկանց և թէ կանանց կտորներին հարկաւոր աստառացու: Ըստ ցանկութեան՝ բոլոր կտորները կարելի է ուղարկել սոսկ միայն տղամ. կամ կանանց համար: Առանց ռիսկի. չը հաւանված ապրանքի համար փողը լրիւ վերադարձնում եմ:
Վերադիր վճ. համար հաշվում է իւրաքանչիւր րուբլուն 2 կոպ., իսկ Սիբիր՝ նշած տարբերութեան համաձայն՝ 2 զգեստացուի համար 85 կ., 4 զգեստացուի համար 1 ր. 25 կ.: Հասցէագրէք՝ фирмѣ М. А. БАБУШКИНА, ЛОДЗЬ. 1-е отд. М.
Թղթակցութիւնները ռուսերէն:
(11,18,25) (В.11220) 159. 3—1

XXVIII ՏԱՐԻ **ԱՂԲԻՒՐ ԵՒ ՏԱՐԱԶ** XXI ՏԱՐԻ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍՆԵՐԸ
Հրատարակվում են նոր, բազմաբովանդակ, մասնակցութեամբ մեր եւ եւրոպական ակնյայտնի գրականագէտների, հրապարակախօսների, լրագրողների, արուեստագէտների եւ գեղագէտների:
Դպրոցների, հաստատութիւնների, գրադարանների եւ հասարակ բաժանորդների համար՝ տարեկան 10 ր.: Արտասահման 18 ր. կամ 50 ֆր., իսկ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ ունեցող ընտանիքներին ՀԻՆԳ ր.: Ներկայ 1910 թ. ընթացքում բաժանորդները ստանում են.
1) ԱՂԲԻՒՐ պատկերազարդ ամսագիր, 2) ՏԱՐԱԶ պատկերազարդ հանդէս, 3) ԱՂԲԻՒՐԻ ԱԿՈՒՆՔԸ, 4) ԱՌՈՂՋԱՊԱՀ, 5) ԳԵՂԱՓՆՋԻԿ, 6) ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ Սանահնի վանքի դարաւոր հոյակապ սրբազան կամարների տակ, 7) Ս. ՍԱՀԱԿ, 8) Ս. ՄԵՍՐՈՊ, 9) ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ, 10) ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ուղևորութիւնը, 11) Ս. ԻՋՄԱՆ ՏԱՃԱՐԻ գեղանի կարը 18-րդ դարի վերջերում, 12) ԳԵՂԱՆԻ ՕՐԱՑՈՅՑ 1911 թ., 13) ՄԱՆԿԱՆՕՑՈՒՄ պէէս, 14) ՉԱՐՄԱՃԻ ԱՐՄՈՒՂԿԻ ճանապարհորդութիւններն ու արկածները, 15) ՀԱՅՐԵՆԻՔ ՍՐԲԱԶԱՆ, տեղագրական, 16) 1910 թ. մայիսի 23-ին ԱՂԲԻՒՐԻ եւ ՏԱՐԱԶԻ 1900 թ. 5000 ԲԱԺԱՆՈՐԴ. (№ №)-երի մէջ վիճակ գցվող 500 առարկաների 2 առմ:

ՎԻՃԱԿ ԵՆ ԳՑՎԵԼՈՒ
արձաններ, գրքեր, պատկերներ, գրչական առարկաներ, սեղանի ընտիր զարդեր, ալբոմներ՝ պօստ-կարտերի եւ լուսանկարների համար, ժամացոյցներ՝ ծոցի, սեղանի վրա դնելու, պատի օրացոյցի համար ընտիր ռելիեֆ եւ փառահեղ կարտօններ, գրասեղանի զարդեր, օդագնացքի մօդելներ եւ այլն, եւ այլն:
Այդ առարկաները անցած դեկտեմբերի մէկից Գրական-Գեղարուեստական Սալօնում դրված էին ի ցոյց 1910 թ. բաժանորդագրվողների:
Վիճակահանութեան մասնակցում են անխտիր բոլոր բաժանորդները:
„Աղբիւր" եւ „Տարազ" միևնոյն հասցէով ստացող բաժանորդներին տրվում է 2 № №, որոնք անուանական են (տպված հասցէները): Վիճակին մասնակցելու համար բաժանորդը չը պէտք է ունենայ վճար անել. վիճակահանութիւնը բոլորովին ՁՐԻ է:
ԱՊԱՌԻԿ կամ ՄԱՍ-ՄԱՍ ՎՃԱՐՈՂ ԲԱԺԱՆՈՐԴ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ: Հասցէն՝ Тифлисъ, Редакція „АГБЮР-ТАРАЗ".
Tiflis, Caucase, Direction „Agbur-Taraz."
(շ. ե. հ.) 124. 10—4

ԵՂԲ. ԱՎՍԱՐԳԻՍՕՎՆԵՐԻ
այգին բաց է Թիֆլիսում արտասահմանեան, ռուսական և տեղական լաւ տեսակի պտղատու ծառեր ու դէկօրատիվ բոյսեր:
Հասցէն՝ Ст. Скра (Зак. ж. д.). Կատալօգը ուղարկվում է ՁՐԻ:
(ու. կ. չ.) 108. 15—6

2 ՌՈՒԲԼՈՎ ՊԻՋԱԿ
Այդպիսի չեղած էժան գնով ուղարկում եմ պատրաստի, կարված, միանգամայն գործն. և գեղ. պիջակ՝ տարվայ ամեն սէզօնին յարմար: Նոյնպէս ուղարկ. եմ պատրաստի շալվարներ, կարված մօդային, գործն. և ամուր կտորից՝ 2 ր.: Պիջակի կամ շալվարի ճանապարհած. 35 կ.: 3 և աւելի առարկ. բերել տալուց՝ իմ հաշւին: Ուղարկ. եմ վերադիր վճ., պօստով, առ. կանխավճ., երաշխաւորութեամբ—եթէ չը հաւանվի՝ յետ եմ ընդունում: Պատուէրները հասցէագրել. фабрик. З. Г. РОЗЕНТАЛЮ, г. Лодзь, № 216.
Թղթակցութիւնները ռուսերէն:
(ա. օ.) (В. 2782) 44. 33—17

ԻՆՉ ԲԱՆ Է «ՏՈՒՐԻՆ» ՇԷՎԻՕՏԸ
Տղամարդ. հագուստեղ. շրջանում նորութիւն է «Շէվիօտ Տուրինը»: Այնպիսի մի էժան գնով՝ ինչպիսին է 3 ր. 30 կ., լաւ տեսակինը՝ 3 ր. 95 կ.—ամբողջ 4¼ արշ. կտորի համար, իբրև տղամ. լրիւ զգեստացու-կտորը ոչնչով չէ զանազանվում արշ. 3—4 ր. արժեցողից և ունի վերջինիս բոլոր յատկութիւնները, այն է՝ բարձր տեսակի ամրութիւն, գործնականութիւն և էլեգանտ.: Գոյները՝ սև, մուգ-կապոյտ, շագանակագոյն: Ուղարկ. եմ վերադիր վճ., պօստով, առանց կանխավճ.: Երբ և աւելի կտոր պահանջելուց՝ իւրաքանչիւր կտորին կցվում է հարկաւոր քանակ. աստառացու ձրի: Առանց ռիսկի, լրիւ երաշխաւոր.—եթէ չը հաւանվի՝ յետ է ընդունվում: Պահանջները խնդրում եմ հասցէագրել՝ въ фабрику шерстяныхъ издѣлій З. РОЗЕНТАЛЯ, г. Лодзь.
Թղթակցութիւնները ռուսերէն:
(շ. ե. հ.) (В.2815.) 45. 16—9

Կովկ. Հայոց Հրատարակչ. Ընկ. Կանոնադրութիւնը
կարելի է ստանալ և անդամ գրվել նաև «Մշակ» լրագրի խմբագրատանը:
Անդամավճարն է 3 րուբլի:
Անդամները ստանում են 3 ր. արժողութեան գրքեր՝ Ընկերութեան հրատարակութիւններից:
(օ. մ.) 143. 3—3

ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅՈՑ ԿՈՆՍԻՍՏՕՐԻԱՆ
սրանով յայտարարում է ի գիտութիւն հասարակութեան, որ ԵՒԼԱԽ-ՇՈՒՇԻ կառուցվող երկաթուղու համար պահանջված
200,000 ՇՊԱԼՆԵՐԸ
կարելի է գնել ամենաձեռնտու պայմաններով ԽՕԹԱՅ և ԳԱՆՁԱՍԱՐԻ վանքային անտառներից: Ցանկացողները թող դիմեն կոնսիստորիային՝ Շուշի:
Անդամ կոնսիստորիայի՝
Սամուէլ քահ. Գասպարեան
(օ. մ.) 135. 6—4

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՕՆ
ՅՈՎՍԷՓ
ՄԵԼԻՔ-ՋՀԱՆԵԱՆՑԻ
Тифлисъ, Лермонтовская ул., № 4 (близъ III мужск. гимназіи)
Ընդունում են աշակերտներ գիշերօթիկ և երթևեկ և պատրաստում են բոլոր միջնակարգ դպրոցների համար:
Աւանդվում են՝ ռուս, հայ, գերման, լատին, և ֆրանսիական լեզուներ:
(ե. հ. կ.) 117. 20—6

Մամուլի տակից դուրս եկաւ և ծախվում է
ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌԵՐԻ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ
ԵՒ
ՆՐԱՆՑ ԴԷՄ ԿՌՈՒԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ
Պատկերազարդված 41 նկարներով
Անհրաժեշտ ձեռնարկ այգեգործների եւ պարտիզպանների համար:
Գինն է 35 կ. (ճանապարհածախսով. կարելի է 7 կոպ. մարկաներով):
Դիմել՝ Тифлисъ, редакція журн. «Гюхатtесъ».
(ճ. կ.) 110. 8—4

2 ԶԳԵՍՏ 5 ր. 25 կ.
Տարածելու նպատակով՝ մենք ուղարկում ենք 12 ր. փոխարէն 5 ր. 25 կոպէկով հետևեալ զգեստացու 2 կտորները. 1) 4¼ արշ. ֆրանս. տրիկօ տղամ զգեստի համար, շատ ամուր, գործնական և մօդային նկարներով բրդէ կտոր: 2) 8 արշ. կտոր «Անգլէզ», կանանց ամբողջ զգեստի համար, միանգամայն մօդային և գեղեցիկ բրդէ կտոր: Այդպիսի 2 կտոր լաւ տեսակից՝ ուղարկում ենք 5 ր. 75 կոպէկով: Ճանապարհածախսը 55 կոպ.: Երկու և աւելի զոյգ կտոր բերել տալուց՝ ճանապարհածախսը մեր հաշւին: Ուղարկում ենք պօստով, վերադիր վճ., առանց կանխավճ. և երաշխաւորութեամբ—եթէ չը հաւանվի՝ յետ ենք վերցնում: Պահանջները հասցէագրել. г. Лодзь, въ фабрику Т-ва „Э Х О".
Թղթակցութիւնները ռուսերէն:
(շ. ե. հ.) (В. 2831) 46. 17—9

ԹՂԹԷ ՏՈՊՐԱԿՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ
„ԶՎԷԶԴԱ" ընկերութեան
Բարօնսկայա եւ Մեծ-վանքի փող. անկիւն, Թառումեանի տպարանին կից:
Յայտնվում է ի գիտութիւն հասարակութեան, որ վերոյիշեալ գործարանում պատրաստվում են թղթէ տոպրակներ զանազան մեծութեան, ինչպէս հասարակ, նոյնպէս և զարմօնի, տառերով և ըստ ցանկութեան՝ պատուիրող ֆիրմայի անուան տպագրութեամբ: Տոպրակները պատրաստվում են արտասահմանից ստացված էլեկտրաշարժ մեքենայի միջոցով: Պատուէրներն ընդունվում են շատ ձեռնտու գներով և կատարվում են շուտափոյթ և բարեխղճօրէն: Օտար քաղաքացիներին պատուէրներն ուղարկվում են վերադիր վճարով՝ ստանալով կանխավճար արժէքի անուանն ¼ մասը:
Նոյն տեղում ընդունվում են և տպարանական ամեն տեսակ պատուէրներ:
Հասցէն (Նամակների համար. Тифлисъ, фабрика бумажныхъ мѣшковъ Т-ва „ЗВѢЗДА".
(Հեռագիրների համար. Тифлисъ, фабрика „ЗВѢЗДА".
(հ. կ.) 132. 10—3

Թոքախտի դէմ կռւող Կովկասեան Ընկերութիւն
Նորին Մեծութեան Կովկասի Փոխարքայի թոյլտւութեամբ ԱԲԱՍԹՈՒՄԱՆՈՒՄ 100 թոքախտաւորների ՍԱՆԱՏՕՐԻԱ կառուցելու համար ԲԱՑ Է ԱՐՎԱԾ ԺՈՂՈՎԱՐԱՐՈՒԹԻՒՆ: ՍԱՆԱՏՕՐԻԱՆ լինելու է առողջապահութեան ամեն պահանջներին համապատասխան և թոքախտը բուժելու բոլոր նոր մեթօդներին յարմարեցված:
Այս ծրագրած գործը թէկուզ մաս-մաս իրագործելու համար՝ հարկաւոր գումարը ժողովելուց յետոյ, ընկերութիւնը անմիջապէս կը ձեռնարկէ ՍԱՆԱՏՕՐԻԱՅԻ շինութեան: ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՆ. Վարչութեան նախագահ բժիշ. Մ. Թումանեան (Паскевича, № 6), վարչութեան բոլոր անդամները և սանատօրիայի շինութեան տեղը որոշող յանձնաժողովի անդամները—բժ. Մ. Ն. Վեսելովզօրօվ (Кирпичн. пер.), բժ. Ս. Վացաձէ (Петербург. ул., 9), բժ. Ի. Զ. Գօպաձէ (Вознесенская, 4), բժ. Վ. Դ. Գամբաշիձէ (Головинскій пр., 8), Ի. Մ. Դօլուխանեան (Паскевича, № 6), բժ. Պ. Ա. Ջավրիեվ (Гановская, 3), բժ. Կ. Ա. Կրէստնիկօվ (Աբասթումանում), բժ. Ա. Ա. Մուխաբինսկի (Вельяминовская, 3), բժ. Լ. Մ. Մօնին (քաղաքային ծննդաբեր. ապաստարան), բժ. Ի. Ի. Օստրօվսկի (Михайловскій пр., 106), բժ. Կ. Ն. Ստեփանեան (Ново-Бебутовская, № 1), բժ. Ն. Զ. Ուսիկօվ (Гановская, 15), բժ. Ե. Գ. Ֆեօդօրօվ (Елизаветинская, 100), բժ. Ա. Ի. Խատիսեան (քաղաքային ուպրավա):
Նուիրատւութիւններն ընդունվում են նոյնպէս «ՄՇԱԿԻ» եւ տեղական այլ լրագիրների խմբագրատներում:
(հ. կ.) 100. 5—5

„ՊՐՈՎՕԴՆԻԿ"
1897 թ.
ПОСТАВЩИКЪ ДВОРА ЕГО ИМПЕРАТОРСКАГО ВЕЛИЧЕСТВА
1888
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
~ՌԻԳԱՅՈՒՄ~
Անդրկովկասեան ֆաբրիկային պահեստ ԹԻՖԼԻՍՈՒՄ
Սօլօլակսկայա փող., № 4.
ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ՄԵԾԱՔԱՆԱԿ ԵՒ ՀԱՏՈՎ
ՌԵԶԻՆԱՊԱՏ ԱՆԹԱՓԱՆՑԻԿ ՎԵՐՆԱԶԳԵՍՏՆԵՐ
Արտասահմանեան նոր ձևի, պատրաստված անգլիական ամենալաւ կտորներից սկսած
մինչև ամենաէժան կտորները
ՌԵԶԻՆԱՊԱՏ ՊԼԱՇՉՆԵՐ ԵՒ ՎԵՐԱՐԿՈՒՆԵՐ պարոնայք օֆիցերների համար.
ՌԵԶԻՆԱՊԱՏ ԿՏՈՐԵՂԷՆՆԵՐ զանազան կարիքների համար.
ՌԵԶԻՆԻ ՍՊՈՒՆԳՆԵՐ.
ՍԱՆՐԵՐ եղջերեայ ռեզինից
№ 3 1037. 0—7

Типографія „Экономія" Большая Банкская № 3.